

9(47.3)

Ն-54

Մ. Ն. ԵՐԱՒՍՅԱՆ

ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ
ԽՄԲԱԿՆԵՐՆ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ


ԱՐՄՅԱՆ

М. НЕРСИСЯН

КАНДИДАТ ИСТОРИЧ. НАУК

НАРОДНИЧЕСКИЕ
ОРГАНИЗАЦИИ
В ЗАКАВКАЗЬЕ

540



3(91.922)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԻՆՏԻՏՈՒՏ ԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԵՎ ԱՐՔԵՕԼՈԳԻԱԿԱՆ

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ

ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ
ԽՄԲԱԿՆԵՐՆ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա աշխատութեան մեջ քննութեան յենթակա հարցը՝ նարոզնիկական խմբակներն Անդրկովկասում՝ կարևոր նշանակութեան ունի Անդրկովկասի ժողովուրդների հեղափոխական շարժումների ու հասարակական մտքի զարգացման պատմութեան համար: Այդ նշանակալից հարցը, սակայն, մինչև որս չի լուսաբանվել և՛ մարքսիստական, և՛ վոչ մարքսիստական պատմագրութեան կողմից: Ներկա աշխատութեանն առաջին գիտական ուսումնասիրութեանն է այդ մասին վոչ միայն մեզանում, այլև ընդհանրապես:

Իր աշխատութեանն ընկեր Ներսիսյանը գրել է ինչպես առաջներում հրատարակված նյութերի, տպագրված ու անտիպ առանձին հոշերի, այնպես էլ վերջին տարիների ընթացքում խորհրդային Միութեան զանազան քաղաքների արխիվներում իր կողմից հայտարերված արխիվային փաստաթղթերի հիման վրա: Մինչև որս անհայտ այդ փաստաթղթերից մի քանիսը մենք ավելորդ չհամարեցինք զետեղել վորպես հավելված:

Ընկեր Ներսիսյանի աշխատանքը նպատակ չունի տալ ընդհանրապես Անդրկովկասյան նարոզնիկութեան, վորպես իդեական հոսանքի, պատմութեանը, այլ միայն Անդրկովկասում գործող նարոզնիկական խմբակների պատմութեանը: Հենց այդ պատճառով էլ աշխատութեան մեջ միայն հիշատակվում են Անդրկովկասցի նարոզնիկ ուսանողների կողմից հիմնված այն խմբակները («Կովկասցիներ», «Յառմո»), վորոնք գործել են Անդրկովկասից դուրս՝ Պետերբուրգում և Յյուրիխում:

Ընկեր Ներսիսյանի աշխատութեանը տալիս է հարուստ և նոր նյութեր նաև 1860-1880-ական թվականների հայ հեղափոխական ռազնոչին ինտելիգենցիայի մասին: Այդ տեսակետից նրա աշխատութեանը կարևոր և արժեքավոր գործ է վոչ միայն Անդրկովկասյան նարոզնիկութեան, այլև 19-րդ դարի հայ հասարակական մտքի զարգացման պատմութեան համար ընդհանրապես:

ОТ ИНСТИТУТА

Рассматриваемый в данной работе вопрос — народнические организации в Закавказье — имеет важное значение для истории революционного движения и развития общественной мысли народов Закавказья. Однако, этот вопрос до настоящего времени оставался не исследованным как со стороны марксистской, так и немарксистской историографии. Данная работа является первым научным исследованием, трактующим эту проблему.

Свою работу тов. Нерсисян написал, взяв в основу как ранее опубликованные материалы, изданные и не изданные воспоминания, так и документы, обнаруженные им в последние годы в разных архивах Советского Союза. Некоторые из этих неопубликованных до сих пор документов мы сочли нелишним поместить в приложении.

Работа тов. Нерсисяна не имеет целью дать историю народничества в Закавказье, как идейного течения вообще, она дает лишь историю народнических *организаций*, действовавших в Закавказье. Именно поэтому в работе упоминается лишь о тех кружках („Кавказцы“, „Ярмо“), организованных закавказскими студентами — народниками, которые действовали вне Закавказья — в Петербурге и в Цюрихе.

Работа тов. Нерсисяна дает богатые и новые материалы также об армянской разночинной революционной интеллигенции 1860—1880-ых годов. С этой точки зрения эта работа представляет важный и ценный труд не только по вопросу о народничестве в Закавказье, но и по вопросу истории развития армянской общественной мысли XIX века.

1870—1880-ԱՎԱՆ ՔՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՐՈՂՆԻԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՆԴԻՐՎՈՎԿԱՍԻ ՌԱԶՆՈՋԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԻԱՆ

Վերսկս ուրույն քաղաքական հոսանք, նարողնիկությունը հանդես յեկավ անցյալ դարի 60-ական թվականների վերջերին: Հեղափոխական ուղնուշին (տարաստիճան) ինտելիգենցիայի շարքերում ձևակերպված և մինչև վերջն ել գրեթե բացառապես նրա հետ կապված այդ հոսանքը, սակայն, առանձնապես ծավալ ստացավ և հասարակական-քաղաքական ուժ դարձավ միայն 1870—80-ական թվականներին: Մտավորապես 80-ական թվականներին յերկրորդ կեսին հեղափոխական նարողնիկությունը կապիտալիզմի զարգացման և գյուղացիության բացահայտ շերտավորման հետևանքով իր տեղը գիշեց լիբերալ նարողնիկությանը, վորն արդեն հեղափոխական պայքարի անհրաժեշտությունը բացասող սեակցիոն հոսանք եր:

1870—80 թ. թ. նարողնիկությունը միատարր չեր: Նա բազմակցած եր մի շարք խմբակներից և ուղղություններից, վորոնք ինչպես տեսական, այնպես ել պրակտիկ-տակտիկական հարցերում կանգնած եյին թեև, իհարկե, վոչ սկզբունքային, բայց այնուամենայնիվ տարբեր դիրքերի վրա: 1870—80 թ. թ. նարողնիկության մեջ, որինսակ, գրեթե միաժամանակ, տեղ եյին գտել տակտիկական տարբեր հայացքներ պաշտպանող Լավրովի, Բակունինի և Տկաչովի կողմնակիցները:

1870—1880 թ. թ. նարողնիկությունն ունեցավ զարգացման յերեք ետապ: Առաջին ետապը, վորը ժամանակագրական կարգով համարվում և 1870-ական թվականների առաջին կեսը, բնորոշ և նրանով, վոր նարողնիկական շարժման մեջ տիրապետողները խաղաղ պրոպագանդայի կողմնակիցներն եյին (Չայկովսկու, Դրոյուշինի խմբակները): Յերկրորդ ետապն ընդգրկում և 1870-ական թվականների յերկրորդ կեսը: Հեղափոխական նա-

բողոքները զարգացման այս յերկրորդ ետապում տիրապե-
տողները բունտարներն էլին, վորոնք փորձում էլին գյուղացիա-
կան հեղափոխական յերուխմներ ու բունտեր կազմակերպել (Սոս-
ֆանովիչ, Դեյչիչ, Բոխանովսկի և այլն): 1880-ական թվական-
ների յերկրորդ կեսին հեղափոխական նարոդնիկուլեթյունն ապրեց
իր զարգացման յերրորդ և վերջին ետապը: Այդ ետապում ար-
դեն տիրապետողը տեռորիստական հոսանքն էր («Նարոդնայա
Վոլյա»):

Զնայած իր վոչ միատարրութեանը և իր զարգացման այս
յերեք ետապների առկայութեանը՝ 1870—80-ական թվականներին
նարոդնիկուլեթյունը Ռուսաստանի հեղափոխական շարժումների
պատմութեան մեջ հանդես է գալիս վորպես մի առանձին, ու-
րույն և ամբողջական հասարակական-քաղաքական հոսանք: Նա
վորպես այդպիսին հանդես է գալիս շնորհիվ իր ընդհանուր, ամ-
բողջական տեսութեան, նպատակադրման և սոցիալ-դասակար-
գային բովանդակութեան:

Ի՞նչ էր 1870—80 թվականների նարոդնիկուլեթյան տեսու-
թյունը, նրա աշխարհայացքը: Այս հարցին սպառիչ պատասխան
է տալիս Վ. Ի. Լենինը «Մենք ի՞նչպիսի ժառանգութեանից ենք
հրաժարվում» իր հայտնի աշխատութեան մեջ:

«Նարոդնիկուլեթյունն ասելով,—գրում է Լենինը,—մենք
հասկանում ենք հայացքների մի սիստեմ, վորն իր մեջ
հետևյալ յերեք գծերն է պարունակում.

1. Կապիտալիզմը Ռուսաստանում անկում, ռեգրես
համարելը: Այստեղից՝ կապիտալիզմի կողմից դարավոր հի-
մունքների «բեկվելը» «կասեցնելու», «կանգնեցնելու», «գա-
զարեցնելու» ձգտումներն ու ցանկութեանները և այլ ռե-
ակցիոն վայնաստեղծներ:

2. Ընդհանրապես ռուսական տնտեսակարգի և մաս-
նավորապես գյուղացու՝ իր համայնքով, արտելով և այլն,
ինքնագոյություն գտնելու մասին: Ռուսական տնտեսական հա-
րաբերութեանների նկատմամբ հարկավոր չեն համարվում
կիրառել ժամանակակից գիտութեան կողմից մշակված հաս-
կացողութեանները հասարակական տարբեր դասակարգերի
և նրանց կոնֆլիկտների մասին: Համայնական գյուղացիու-
թյունը գիտվում է վորպես մի ինչ-վոր բարձրագույն, լա-

վագույն բան կապիտալիզմի համեմատութեամբ, այստեղից
առաջ է գալիս «հիմունքների» իդեալացումը: Գյուղացիու-
թյան շրջանում ժխտվում և սքոզվում են միայն այն հակա-
սությունները, վորոնք հատուկ են ամեն մի ապրանքային
և կապիտալիստական տնտեսութեան, ժխտվում է այդ հա-
կասութեանների կապը նրանց ավելի զարգացած ձևի հետ
կապիտալիստական արդյունաբերութեան և կապիտալիստա-
կան հողագործութեան մեջ:

3. Յերկրի «ինտելիգենցիային» և իրավական-քաղաքա-
կան հաստատությունների՝ հասարակական վորոշ դասա-
կարգերի նյութական շահերի հետ յեղած կապի անտեսումը:
Այդ կապի ժխտումը, այդ սոցիալական գործունեների մա-
տերիալիստական բացատրութեան բացակայութեանը հար-
կադրում է նրա մեջ տեսնելու մի ուժ, վորն ընդունակ է
«պատմութեանն ուրիշ գծով քարշ տալու»¹:

Տալով նարոդնիկուլեթյան աշխարհայացքին այս բնորոշումը,
Լենինն ավելացնում է, վոր այդ բնորոշումը հավասարաչափ վե-
րաբերում է բոլոր տեսակ նարոդնիկներին, ինչպես լիբերալ նա-
րոդնիկութեանը, նույնպես և 1870—80 թ. թ. նարոդնիկութեանը:
Ռեակցիոն իդեալիզմ և եկլեկտիզմ—ահա վորջ նարոդնիկութեան,
այդ թվում և 1870—80-ական թվականների նարոդնիկութեան,
թեորետիկական կառուցումների հիմքերը:

Ի՞նչ էր սակայն 1870—80 թ. թ. նարոդնիկութեան սոցիա-
լական-դասակարգային բովանդակութեանը: Իր «Ինչ են «ժո-
ղովրդի բարեկամները» և ինչպես են նրանք կալում սոցիալ-դե-
մոկրատիայի դեմ» հոշակավոր աշխատութեան, ինչպես նաև իր
մյուս գործերի մեջ, մի շարք անգամ շոշափելով այս հարցը,
Վ. Ի. Լենինը 1870—80 թ. թ. նարոդնիկութեանը բնութագրում
է վորպես յետ-ռեֆորմյան շրջանի գյուղացիութեան, մանր ար-
տադրողների շահերն արտահայտող հոսանք, վորպես գյուղացիա-
կան «հեղափոխութեան», գյուղացիական հեղափոխական շար-
ժումների «կուսակցութեան», վորպես կարվածատերերի դեմ հե-
ղափոխական պայքար մղող կազմակերպութեան:

Հեղափոխական նարոդնիկութեանը 1861 թվի գյուղացիա-

¹ Ленин; собр. соч., изд. третье, т. II, к. 2, 321:

կան ռեֆորմին անմիջապես հաջորդող ռուսական իրականութեան ծնունդն էր, այն իրականութեան, վորի հիմնական տարբերու- ներն էին ճորտատիրական կարգերի մնացորդները, կալվածա- տիրական լատիֆունդիաների ու սրա ֆեոդալ-կալվածատերերի պետական որգանը հանդիսացող ցարիզմի առկայութեանը, կա- պիտալիզմի թույլ զարգացումը, գյուղատնտեսութեան ծայրահեղ հետամնացութեանը, գյուղացիութեան հողազրկութեանը, ճնշում- ներն ու կեղեքումները, գյուղացիական անտեսութեան աղքա- տացումը և քայքայումը: 1870—80 թ. թ. նարոդնիկութեանը հրապարակ յեկավ այն շրջանում, յերբ դեռ նոր էր խթանվում և աշխուժանում արդունաբերական կապիտալիզմի զարգացումը, յերբ բանվոր դասակարգը Ռուսաստանում գեոևս չէր ձևավորվել վորպես կազմակերպված քաղաքական ուժ, յերբ նա դեռևս չու- ներ քաղաքական կուսակցութեան: Հեղափոխական նարոդնիկու- թյունը քաղաքական-հեղափոխական պայքարի ասպարեզ մտավ այն ժամանակ, յերբ յերկրի տնտեսական հետամնացութեան հետևանքով գեոևս սուր կերպով չէր արտահայտվում գյուղի, գյուղացիութեան շերտավորումը, յերբ հիմնական հարցն ազրա- րային-գյուղացիական հարցն էր, յերբ որակարգում զրված էին բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան խնդիրները, յերբ դա- սակարգային պայքարի առանցքը գյուղացիական հեղափոխական պայքարն էր՝ ուղղված ցարիզմի, կալվածատիրութեան դեմ: Հանդես գալով այսպիսի պայմաններում հեղափոխական ռազմոչին ինտելիգենցիան իրեն նվիրում էր գյուղացիութեան շահերի պաշտպանութեան գործին և իր ուժերի չափերով պայքարում ցա- րիզմի և միջնադարականութեան դեմ: Չնայած «մանր-բուրժուա- կան սոցիալիզմին» իր իլյուզիաներին, «գյուղացիական սոցիա- լիզմին» իր մշուշապատ քարոզներին, 1870—80-ական թվական- ների հեղափոխական նարոդնիկութեան պայքարը վոչ մի ընդ- հանուր բան, վոչ մի առնչութեան չունի իսկական սոցիալիզմի հետ: Հեղափոխական նարոդնիկութեան իրական բովանդակու- թյունն այդ Ռուսաստանի բուրժուա-գյուղացիական հեղափո- խական դեմոկրատիզմն էր: Յարիզմի դեմ հեղափոխական նա- րոդնիկների վարած պայքարի ռեալ բովանդակութեանը, իսկա- կան իմաստը, հասկանում էին իրենք, թե վոչ, այդ միևնույն է, այդ նրանց պայքարն էր հանուն բուրժուա-դեմոկրատական

կարգերի, հանուն ֆեոդալական կարգերի խորտակման, հանուն ազրարային-գյուղացիական հարցի բուրժուական լուծման: Այդ էր 1870—80 թ. թ. հեղափոխական նարոդնիկութեան պայքարի իրական բովանդակութեանը, և հենց այդ է նրա պատմական ծառայութեանը:

Տնտեսական, սոցիալ-քաղաքական այն միջավայրը, վորի ծնունդը յեղան հեղափոխական նարոդնիկները Ռուսաստանում, դեռ 1870-ական թվականներից հիմնական գծերով գոյութեան ունի նաև Անդրկովկասում: Լինելով ռուսական խնդիրայի մի մասը, յենթարկվելով ցարիզմի քաղաքական-վարչական ռեժիմին, Անդրկովկասն ունի հիմնականում նույն սոցիալ-տնտեսական հարաբերութեանները, նույն քաղաքական ռեժիմը, վոր ունի Ռուսաստանը: 1870—80 թ. թ. Անդրկովկասի սոցիալ-տնտեսա- կան, քաղաքական կյանքը կանգնած էր մոտավորապես նույն մակարդակի վրա, ինչ մակարդակի վրա վոր կանգնած էր ամբողջ Ռուսաստանի տնտեսական, սոցիալ-քաղաքական կյանքը: Ինչ- պես ամբողջ Ռուսաստանում, նույնպես և Անդրկովկասում սո- ցիալ-տնտեսական հիմնական խնդիրը բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան խնդիրն էր, ազրարային-գյուղացիական հարցն էր: Ռուսաստանի և Անդրկովկասի 1870—80 թ. թ. սոցիալ-տն- տեսական կյանքի մեջ, իհարկե, կային տարբերութեաններ: Ան- դրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքը, որինակ, ավելի հետա- մնաց էր ու ավելի թույլ էր զարգացել քան Ռուսաստանի սո- ցիալ-տնտեսական կյանքը: Այդ տարբերութեանները սակայն քանակական էին, բայց վոչ վորակային:

Ունենալով հիմնականում նույն տնտեսական ու սոցիալական հարաբերութեանները, ինչ վոր Ռուսաստանը, Անդրկովկասը ընա- կանաբար ունի նաև հիմնականում դասակարգային այն պայ- քարը, վորը գոյութեան ունի ցարական Ռուսաստանում: Ինչպես վոչ Ռուսաստանում, նույնպես և Անդրկովկասում դասակարգային պայքարի առանցքը կազմում էր գյուղացիական մասսաների պայ- քարն ընդդեմ ֆեոդալական կարգերի, ընդդեմ ցարիզմի: Անդր- կովկասի ներքին, սոցիալ-դատակարգային շարժումներն ունեյին նույն բովանդակութեանը, ինչ վոր Ռուսաստանի հեղափոխա- կան շարժումները: Գյուղացիական հեղափոխական մասսաների ընդհանուր թշնամին, ինչպես վոչ Ռուսաստանում, նույնպես և

Անդրկովկասում, նույն ցարիզմը և կալվածատիրութունն էր: Այդպիսի պայմաններում, պարզ է, վոր Անդրկովկասի հեղափոխական շարժումներն ունեյին անհրաժեշտ բոլոր նախադրյալներն ու հիմքերը միավորվելու, միաձուլվելու Ռուսաստանի հեղափոխական շարժումների հետ: 1860—70-ական թվականներից արդեն նկատվում են Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխական շարժումների միավորման տենդենցները: Այդ տենդենցները գնալով ավելի յին ուժեղանում, և բանվորական շարժման շնորհիվ 1900-ական թվականներին արդեն Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումների միավորումը փաստ է դառնում, վորի հետևանքով և Անդրկովկասի հեղափոխական շարժումների բախտը կապվում է համառուսական ընդհանուր շարժումների բախտի հետ:

Հեղափոխական նարոդնիկութունը, այսպիսով, վորպես յետ-ուեֆորմյան շրջանում ցարիզմի, կալվածատիրության դեմ գյուղացիության, մանր արտադրողների մղած հեղափոխական պայքարի արտահայտություն, հիմքեր ունեւր նաև Անդրկովկասում: Նարոդնիկութունը, վորի ուսւլ բովանդակությունը, ինչպես ասացինք, վոչ թե «գյուղացիական սոցիալիզմն» էր, այլ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության համար մղած նրա պայքարը, գործունեյության ասպարեզ ունեւր նաև Անդրկովկասում:

Բայց ի տարբերություն Ռուսաստանից, Անդրկովկասում կար նաև ազգային հարցը, վորն Անդրկովկասի իրականության մեջ խաղում էր վոչ փոքր դեր: Յարիզմի գաղութային բիրտ քաղաքականությունը, վոր արտահայտվում էր Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ ազգային ճնշումներ գործ դնելու, այդ ժողովուրդների կուլտուրական դարգացումը խափանելու, նրանց «ուսացման» յենթարկելու և ազգահարած այլ փորձերի մեջ, ահա այդ քաղաքականությունը ստեղծում էր Անդրկովկասում անհրաժեշտ նախադրյալներ ու հիմքեր նաև ազգային ազատագրական շարժումների համար: Ի պատասխան ցարիզմի ազգային ճնշման քաղաքականության, Անդրկովկասի ժողովուրդների մեջ առաջ եյին գալիս հակացարական, ազգային-ազատագրական շարժումներ, վորոնց գլուխն էր անցնում Անդրկովկասի ժողովուրդների ազգային դեմոկրատական ինտելիգենցիան: 1870—1880 թ. թ. կեսում Անդրկովկասի ժողովուրդների հակացարական, ազգային

ազատագրական շարժումները գլխավորելու գործում առանձնապես մեծ դեր էր խաղում Անդրկովկասի հեղափոխական ռազմոչին ինտելիգենցիան: Անդրկովկասի 1870—1880-ական թվականների ազգային ազատագրական շարժումները, սակայն, շնորհիվ ուսուական իմպերիայի սոցիալ-քաղաքական սիստեմի, ստանում եյին հակաֆեոդալական բնույթ և որչեկտիվորեն, վերջին հաշվով, հանդում եյին ազրարային-գյուղացիական, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հարցերին: Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումներն այդպիսի բնույթ եյին ստանում, վորովհետև ազգային հարցը Ռոմանովների իմպերիայում դեռևս այդ ժամանակ հանդես էր գալիս վոչ վորպես ինքնուրույն, վճռական հարց, այլ վորպես ընդհանուր, ավելի կարևոր հարցի՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հարցի՝ մի մասը:

«Ռուսաստանի քաղաքական կյանքի առանցքը,—գրում էր ընկեր Ստալինը,—վոչ թե ազգային հարցն է, այլ ազրարայինը: Ուստի և ուսուական հարցի, ուրեմն նաև ազգերի «ազատագրման» բախտը Ռուսաստանում կապակցվում է ազրարային հարցի լուծման հետ, այսինքն ճորտատիրական մնացորդների վոչնչացման հետ, այսինքն յերկրի դեմոկրատացման հետ: Սրանով էլ բացատրվում է, վոր Ռուսաստանում ազգային հարցը հանդես է գալիս վոչ թե իբրև ինքնուրույն ու վճռական մի հարց, այլ իբրև յերկրի ապաճորտացման ընդհանուր և ավելի կարևոր հարցի մի մասը... Ռուսաստանում առաջադիմության բախտը վճռում է վոչ թե ազգային հարցը, այլ ազրարային հարցը. ազգային հարցը ստորադաս է»¹:

Ի՞նչ դիրք էր բռնում Անդրկովկասի հեղափոխական ռազմոչին ինտելիգենցիան ընդհանրապես ուսուական հեղափոխական շարժումների և մասնավորապես 1870—80 թ. թ. նարոդնիկական շարժման նկատմամբ:

Անդրկովկասի հեղափոխական ռազմոչին ինտելիգենցիան, վոր քաղաքական գործունեյության հրապարակ մտավ անցյալ

¹ Сталин, «Марксизм и национально-колониальный вопрос, Москва, 1937 г., էջ 19»

դարի 60-ական թվականներից, ունեւր յերկու թև: Անդրկովկասի ազնոշին ինտելիգենցիայի մի մասը սխալմամբ առաջ քաշելով միայն ազգային հարցը նեղ առումով և այն չկապակցելով դեմոկրատական հեղափոխութեան ընդհանուր հարցերի հետ, իրեն հետև յեր պահում ընդհանուր, համառուսական հեղափոխական շարժումներից և աշխատում եր վարել բացառապես մեկուսացած ազգային ազատագրական պայքար: Նա կարծում եր թե այդ ճանապարհով հնարավոր ե ազատագրել կովկասյան ժողովուրդներին. ցարիզմի տիրապետութեանից և ստեղծել աղբային ինքնուրույն պետական միավորումներ, կամ թե կովկասյան մի ընդհանուր պետականութեան («կովկասյան Ֆեդերացա»): Յնչնելով այս նպատակագրութեան Անդրկովկասի ազնոշին ինտելիգենցիայի այդ մասը չեւր միաձուլում իր պայքարը ռուսական ընդհանուր հեղափոխական շարժման հետ, նա չեւր մասնակցում համառուսական հեղափոխական շարժմանը և կանգնում եր սեպարատ պայքարի տակտիկայի վրա: Այդպիսի տակտիկա ունեւր, որինակ, ժնելում 1874 թվին գումարված կովկասյան ուսանողների համագումարի մասնակիցների մեծ մասը (Գեորգի Մերեթելի, Ալեքսանդր Մարաջել, Իվանով, Ալիբեկյան և այլն)¹: Այդպիսի տակտիկա ունեւր նաև հայ ազնոշին, ղեմակրատական ինտելիգենցիայի առաջին ներկայացուցիչներից մեկը՝ Արսեն Կրիստյանը, վորը ղեռևս 1868 թվին հակացարական ընույթի մի խմբակ եր կազմակերպել Ալեքսանդրոպոլում²:

¹ Տես Զարգարու հուշերը («Былое», сентябрь 1907 г. № 177—179):

² Իղեպ սասած, 1860—1870 թ. թ. հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմութեան համար ուշագրավ են հակացարական, աղբային-ազատագրական իդեաներով տոգորված այն խմբակները, վորոնք կազմակերպվեցին Ալեքսանդրոպոլում (Լենինականում) և Ղարաբիլիսայում (Կիրովականում) 1860—1870-ական թվականներին: Այդ խմբակներից առաջինը, վորը կազմակերպվեց 1868 թվին ուսուցիչ Արսեն Կրիստյանի նախաձեռնութեամբ Ալեքսանդրոպոլում, կոչվել և «Բարենպատակ ընկերութեան», իսկ մյուսը, վոր կազմակերպվել և 1874 թվին Ղարաբիլիսայում չառարար Բաժնի քարտուղար Համբարձում Բալասանյանի ղեկավարութեամբ, կոչվել և «Կանտոնայ հայրենյաց սիրո»: Այս խմբակների մասին կազմված ժամդարմական հատուկ գործը գտնվում և «Հեղափոխութեան արխիվում» Մոսկվայում (տես Архив Революции. 3-е отделение канц. его императорского величества, 3-я Экспедиция, дело № 120):

Այլ տակտիկա ունեւր Անդրկովկասի հեղափոխական ազնոշին ինտելիգենցիայի մյուս թեւը: Ըմբռնելով, վոր Անդրկովկասի ժողովուրդների ազատագրութեանը սերտ կերպով կապված ե ռուս ժողովրդի պայքարի և ազատագրութեան հետ, հասկանալով, վոր Անդրկովկասյան ժողովուրդների ազատագրութեան բախտը կապված ե ռուսական բուրժուազեմոկրատական ընդհանուր հեղափոխութեան բախտի հետ, Անդրկովկասյան հեղափոխական ազնոշին ինտելիգենցիայի այդ մասն իր պայքարը միավորում, միաձուլում եր ռուսական հեղափոխական ընդհանուր շարժման հետ և ակտիվ կերպով գործում, աշխատում եր ռուսական հեղափոխական շարժումների մեջ: Անդրկովկասի հեղափոխական ինտելիգենցիայի այս թեւը կանգնած եր ընդհանուր պայքար վարելու տեսակետի վրա: Այդ թեւի ներկայացուցիչները սերտ, անդամ անձնական, կապեր եյին հաստատում ռուս հեղափոխական շարժման խոշորագույն ներկայացուցիչներին հետ և աշխատում եյին ռուսական հեղափոխական խմբակներում: Նրանք գլխավորապես գտնվում եյին ռուս հեղափոխական մտքի և նրա ակախավոր ներկայացուցիչներին իղեական ազգեցութեան տակ:

Անդրկովկասյան հեղափոխական, ազնոշին ինտելիգենցիայի այդ մասի առաջին ներկայացուցիչներից մեկն եր հենց մեծ ղեմակրատ-հեղափոխական Միքայել Նալբանդյանը, վորը հայ ժողովրդի ազատագրութեան գործը կադում եր ռուս մեծ ժողովրդի պայքարի և ազատագրութեան հետ և ինքն անմիջական կապ եր հաստատում իր ժամանակի ռուս հեղափոխական ակախավոր գործիչների (Գեբեցենի, Ուարյովի, Բակունինի և ուրիշների) հետ: Շատ բնորոշ ե, վոր արդեն 60-ական թվականներին սկզբներից Ռուսաստանի կենտրոններում՝ Պետերբուրգում, Մոսկվայում սովորող Անդրկովկասի ուսանողութեան մի մասը վոչ միայն ամբողջովին գտնվում եր ռուսական հեղափոխական-քաղաքական մտքի խիստ ազգեցութեան տակ, այլև անձնական կապեր եր հաստատում ռուսական հեղափոխական շարժման այնպիսի ղեկանտի հետ, ինչպիսին մեծ ղեմակրատ, հեղափոխական Ն. Գ. Չերնիշևսկին եր: 60-ական թվականների սկզբներին Պետերբուրգում ուսանող Անդրկովկասցի Յա. Պ. Իսարլովն այս տեսակետից տալիս ե հետաքրքիր տեղեկութեաններ իր թողած հուշերի մեջ: Սոսելով Պետերբուրգում յեղած վրացի ուսանողութեան մասին, Իսարլովն իր հուշերի մեջ գրում ե.

«Այն վրացի ուսանողների խմբակը, վորոնց մեջ կային մարգրիկ, վորոնք մի քիչ ավելի ուշ չափազանց խոշոր դեր խաղացին Անդրկովկասում պարբերական մամուլ ստեղծելու գործում և ընդհանրապես մեծ աշխուժացում մտցրին Կովկասի հասարակական կյանքի մեջ, ուժեղ կերպով ձգտում եր դեպի «Современник»-ի խմբադրուժյունը: Չերնիշևսկու ընտանիքում տիրող սիրալիր և գրկաբաց վերաբերմունքը մեզնից վոմանց խիստ կերպով քաշում եր դեպի այն յերևույթները, վորոնք հանպատրաստից սարքվում եյին այդ տանը: Սովորաբար մենք գալիս եյինք յերեկոյան թեյին, յերբ տանը գտնում եյինք միշտ հյուրընկալ և կենսուրախ Ոլգա Սոկրատովնային իր քրոջ հետ միասին: Ժամանակն անց եյինք կացնում պարզ գրույցով: Վոչ քաղաքական դավադրություններ և վոչ ել գրական յերեկոներ մենք չեյինք սարքում, այլ պարզապես վիճում եյինք, կատակներ անում, իրար նորություններ և լուրեր հաղորդում այն մասին, ինչ այն ժամանակ զբաղեցնում եր ամբողջ Պետերբուրգին: Չերնիշևսկին ինքը շատ քիչ եր գուրս գալիս մեզ մոտ: Նա նստում եր իր առանձնասենյակում և պարապում: Միայն մեկ անգամ, նոր տարվա նախորդակին, ինչպես հիշում եմ, մենք՝ Ոլգա Սոկրատովնայի գլխավորությամբ ներխուժեցինք նրա առանձնասենյակը և նրան գուրս քաշելով բերինք հանպատրաստից սարքված մեր տարազանդեսը: Ոլգա Սոկրատովնան նրան կանացի շոր հագցրեց և ստիպողաբար պարի մեջ քաշեց: Յեվ ամուսինը, և՛ կինն ուշադիր եյին և յերբեմն գալիս եյին մեզ մոտ, վորպեսզի վորևե տեղ հրավիրեն: Մի անգամ, ինչպես հիշում եմ, Չերնիշևսկիները բարձրացան ինձ մոտ՝ չորրորդ հարկը: Նախաձեռնությունն ամեն բանում պատկանում եր կենդանի ու շարժուն Ոլգա Սոկրատովնային, վորի հետ մենք գուտ ընկերական հարաբերությունների մեջ եյինք:

«Չերնիշևսկու տունը հաճախող կովկասցիներից յես հիշում եմ Ն. Յա. Նիկոլաձեյին, Գ. Յե. Մերեթելուն և Ն. Վ. Գոգոբերիձեյին (հետագայում նրանք, ինչպես հայտնի յե, Թիֆլիսում հիմնեցին «Դրոբրա» վրացերեն թերթը և ընդհանրապես աչքի ընկնող դեր խաղացին վրաց ժուռ-

նախատիկայի պատմության մեջ), Գ. Վ. Գոգոբերիձեյին (հետագայում Բագվի շրջանային դատարանի անդամ), Յեջուբովին (հետագայում հաշտարար դատավոր Փոթիում) և ուրիշներին: Այնտեղ մենք հաճախ հանդիպում եյինք «Современник»-ի յերիտասարդ աշխատակիցներ Ն. Ա. Գորբուլյուբովին, Պիտարովսկուն, Պանսելեյսկին և այլոց:

«Ուսանողական շարժման հետ կապված գործերով կովկասցիներից Վ. Լ. Գոգոբերիձեն (հետագայում Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների ղերեկտոր և խոշոր հասարակական գործիչ) հաճախ խորհրդակցում եր Չերնիշևսկու, Անտոնովիչի և Յելիսեյսկի հետ: «Современник»-ի խմբակի ուժեղ ազդեցության տակ եր գտնվում նաև վրացի ուսանող իշխան Կիր. Բեժ. Լորդկիպանիձեն (հետագայում վրացական ժուռնալիստ և պոետ)»:

Պետերբուրգում և Մոսկվայում ուսանող Անդրկովկասի յերիտասարդությունը 1860-ական թվականների սկզբներից արդեն սկսելով մասնակցություն եր ունենում ուսական ուսանողական հեղափոխական շարժումներին: 1861 թվին, որինակ, Պետերբուրգում տեղի ունեցած ուսանողական շարժումների կապակցությամբ բանտարկված յերկու հարյուր ուսանողների թվում, վորոնց ցանկը ժամանակին հրատարակվեց Գերցինի «Կոռոկու»-ում, կային նաև բավական թվով անդրկովկասցի ուսանողներ:

Հետաքրքիր և, վոր գլխավորապես Պետերբուրգում, Մոսկվայում, ինչպես նաև արտասահմանում (Ճյուրիխում, Ժնեվում) սովորող Անդրկովկասի այդ ուսանողության միջոցով ել հենց ուսական հեղափոխական դեմոկրատիզմի իդեական բարերար ազդեցությունը տարածվում եր բուն Կովկասի և նրա կենտրոնների, գլխավորապես Թբիլիսիի, հեղափոխական, առաջավոր յերիտասարդության—ուսանողության վրա: Ուսման դասընթացն ավարտելուց հետո Պետերբուրգում, Մոսկվայում և Ռուսաստանի այլ կենտրոններում սովորող կովկասյան յերիտասարդության մեծ մասը վերադառնում եր հայրենիք և վոգևորությամբ ձեռնամուխ եր լինում նոր, առաջավոր մտքերի տարածմանը: Շնորհիվ այս հանդամանքի, Անդրկովկասի առաջավոր, հեղափոխականորեն տրա-

¹ Г. Туманов, «Характеристика и воспоминание», 1913 г., № 230—233.

մադրված յերիտասարդութեան մի մասն ընդգրկվում եր ուսուսական ղեմակրատական-հեղափոխական հոսանքի մեջ:

Ընդհանուր պայքարի տեսակետի վրա կանգնած Անդրկովկասի բազմազան հեղափոխական ինտելիգենցիայի կազմը ուսուսական հեղափոխական շարժումների հետ ավելի սերտ դարձավ և ավելի մեծ չափերով արտահայտվեց 1870—80-ական թ. թ.: Հեղափոխական այդ ինտելիգենցիայի ներկայացուցիչները, վերոնց թիվը 1870—80-ական թվականներին արդեն բավական մեծ եր, ակտիվ կերպով մասնակցում էին նարոդնիկական շարժմանը: Ռուսաստանի կենտրոններում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Ռոստովում և այլ քաղաքներում ուսանող անդրկովկասցի յերիտասարդութեան մի մասն ակտիվ կերպով գործում եր ուսուսական նարոդնիկական խմբակներում, խաղալով վոչ փոքր դեր նարոդնիկական շարժման ընդհանուր պատմութեան մեջ:

1870-ական թվականներին ուսուսական նարոդնիկական շարժման մեջ Պետերբուրգում, Մոսկվայում, Պարկովում և Ռոստովում գործող նարոդնիկական խմբակներում ակտիվ կերպով աշխատում էին, աշխատեցին արհեստագործական, անդրկովկասցի ուսանողներ՝ ազնվական Իվան Ջաբաղարին, կնյազ Յիցիանովը, Անտիմոս Գամկրելիձեն, Ստեփան Արտեմի Լարդաշյանը (զանձակեցի հայ, սովորել է Թբիլիսիի սեմինարիայում, մասնակցել է Կովկասցի ուսանողների 1874 թ. ժնեվի համագումարին, յեղել է Սոֆիա Բարդինայի գլխավորութեամբ Մոսկվայում գործող «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպութեան» կոչվող նարոդնիկական խմբակի անդամ, խմբակում վարել է զանձապահի պաշտոն, գաղվել է 50-ի պրոցեսով, դատապարտվել է հինգ տարվա տաժանակիր աշխատանքների, հաճախ հանդես է յեկել Կոչակիձե կեղծ անունով), Յեկատերինա Գամկրելիձեն, Միխայիլ Չեկոիձեն, Գեորգի Ջրանովիչը, Դավիթ Միքայելի Ալվազյանը (հողաշահ, Յյուրիխի խմբակի անդամ, Կովկասցիների՝ ժնեվի 1874 թ. համագումարի մասնակից, 1876 թ. փորձել է Մոսկվայի բանտից ազատել Չեկոիձեյին, Ջրանովիչին և մյուսներին): Նարոդնիկական շարժմանն աջակցեց ակտիվ կերպով մասնակցել են Ուլա Սաֆարյանը, Արշակ Սաֆարյանը, Յե. Պ. Թումանովան, Նիկոլայ Պուշկովը, Կոստանտին Պետրոսի Մամիկոնյանը (սովորել է Մոսկվայի գիմնազիայում, ապա տեխնիկական ինստի-

տուտում, ակտիվ կերպով մասնակցել է «Земля и Воля»-ի հրատարակմանը, 1880 թ. վարչական կարգով աքսորվել է Միրիբ, 1881 թ. մարտ ամսին աքսորում նորից դատվել է Ալեքսանդր 2-րդի սպանութեան առթիվ քեֆ կազմակերպելու և Ալեքսանդր 3-րդին յերդում տալուց հրաժարվելու պատճառով):

Բացի Մոսկվայի և Պետերբուրգի նարոդնիկական խմբակներում աշխատելուց, Անդրկովկասի ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներն աշխատում էին նաև Կիեվում, Պարկովում և Ռոստովում գործող նարոդնիկական խմբակներում: Այսպես որինակ՝ Կիեվում աշխատել է Մելքոն Մուրզայանը (Կիեվի գեներալ գուբերնատորի ասելով նա հանդիսացել է «Կիեվի համալսարանի հոգումների գլխավոր պրոպագանդիստը»), Պարկովում՝ Ալեքսանդր Փիլոսովյանը (Պարկովի անասնաբուժական ինստիտուտի ուսանող, բանտարկվել է 1874 թ.) և Ուդեսայում՝ Միկեյաձեն:

1870-ական թվականների կեսերին (1873—75) Պետերբուրգում գործել է Անդրկովկասի ուսանողներից բաղկացած նարոդնիկական մի խմբակ «Կովկասցիներ» անունով: Խմբակի ղեկավարներն էին ուսանողուհի Բանանյանը և ուսանող Իգնատի Իոսելյանին: Խմբակին մասնակցում էին Բագրաձեն, Շահնազարյանը, վոր մոտ հարաբերութեաններ ուներ ղուլուշինցիների հետ, Շահ-Քախտինսկին (Նախիջևանից), Գրիգոր Պուշկովը, Ջեղգենիձեն և ուրիշներ:

1875 թ. Մոսկվայում Սոֆիա Բարդինայի ղեկավարութեամբ կազմակերպված նարոդնիկական հայտնի խմբակում (խմբակը կոչվում եր «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպութեան») ակտիվ և խոշոր դեր էին խաղում Կովկասի ուսանողները: Խմբակի ակտիվ գործիչների մեծ մասը կովկասցիներ էին: Այդ է պատճառը, վոր 1878 թ. տեղի ունեցած 50-ի պրոցեսում գաղվող նարոդնիկների խոշոր մասը կովկասցի, զբլխավորապես վրացի, ուսանողներ էին:

Կովկասյան ռազմազին ինտելիգենցիայի ակտիվ մասնակցու-

¹ Короленко, «Письма», том I.

² Տես՝ «Био-библиографический Словарь» том, II, вып. 3, 983, Москва, 1931 г.

թյունը համառուսական ընդհանուր հեղափոխական շարժումներին այնքան ակնառու չէր, վոր իր ժամանակի լրագրերը, ինչպես որինակ, Կրայնվսկու՝ Կիեվում լույս տեսնող «ГОЛОС» թերթը, դարմանքով ընդգծում էին այդ հանդամանքը: Կարևոր է հիշել, վոր կովկասյան հեղափոխական այդ ինտելիգենցիան մասնակցում էր ուսական ընդհանուր հեղափոխական շարժումներին՝ առանց վորևե սեպարատ ձգտում ունենալու: Սոֆիա Բարդինայի խմբակի ակտիվ անդամ է 50-ի պրոցեսով դատված վրացի ուսանող Զարադարին իր հուշերի մեջ այդ մասին գրում ե.

«Մեր պրոցեսում (50-ի պրոցեսը—Մ. Ն.),—գրում էր Զարադարին 1907 թ.,—իմ հայրենակիցներից և վոչ մեկը սեպարատիզմի մասին անդամ չէր մտածում, այլ աշխատում էր բացառապես ուսական սոցիալական հեղափոխություն հաղթանակի համար, հեղափոխություն, վորը միայն կարող էր տալ ազատություն Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին»¹:

Հետաքրքիր է հիշատակել, վոր 1870-ական թվականներին արտասահմանում՝ Յյուրիխում և Ժնևում կենտրոնացած կովկասցի ինտելիգենցիայի մի մասը ևս, մերժելով սեպարատ պայքարի տակտիկան, հարում էր ուսական ընդհանուր հեղափոխական շարժմանը: 1872 թ. Յյուրիխում կազմակերպված կովկասցի ուսանողների «ЯРМО» հեղափոխական խմբակի անդամների մի մասը (խմբակի մեջ մտնում էին Նիկոլայ, Ուլա, Յեկատերինա Նիկոլաձեները, Մեսխին, Մաբադյանը, Մերեթելին, Գորամովը և այլն) կանգնած էր համառուսական ընդհանուր հեղափոխական շարժմանը մասնակցելու տեսակետի վրա: Տարածայնություններն այդ հարցի շուրջը բավական ուժեղ էին նաև արտասահմանում չեղած անդրկովկասյան ինտելիգենցիայի—ուսանողության մեջ: Այդ կապակցությամբ շատ բնորոշ է հետեվյալ փաստը. 1874 թ. վրաց հայտնի հմիգրանտ Նիկոլայ Նիկոլաձեյի նախաձեռնությամբ տեղի ունեցավ կովկասյան ուսանողության համագումարը, վորին, ի դեպ ասած, վորպես Հայաստանի ներկայացուցիչ մասնակցում էր յերիտասարդ հայ Պ. Ալիբեկյանը: Ծրագրային և տակտիկական հարցեր քննելու ժամա-

¹ Տես՝ «Былое», 1907 г. № 8 стр. 2.

նակ համագումարը բաժանվեց յերկու մասի: Մեկ մասն անցավ սեպարատ պայքարի դիրքերը, և նրա նպատակն էր ստեղծել կովկասյան առանձին պետականություն՝ «կովկասյան ֆեդերացիա»: Մյուս մասը, ընդհակառակը, կանգնեց համառուսական ընդհանուր հեղափոխական շարժմանը մասնակցելու և ընդհանուր Ֆրոնտով պայքար վարելու տեսակետի վրա: Վերջին մասի ներկայացուցիչները միացան ուսև հմիգրացիայի հետ և սերտ կապ պահպանեցին հմիգրանտներ Լավրովի, Բակունինի և Տիաչևի հետ: Վերադառնալով Ռուսաստան՝ արտասահմանում սովորող կովկասյան հեղափոխական ինտելիգենցիայի այդ ներկայացուցիչներն ակտիվ մասնակցություն ունեցան ուսական նարոդներիական շարժմանը:

Կովկասյան բազնոչին, հեղափոխական ինտելիգենցիայի մի մասի մասնակցությունը նարոդնիկական շարժմանը շարունակվում և ավելի մեծ չափեր էր ընդունում 1880-ական թվականներին: Ինչպես 1870-ական, այնպես էլ 1880-ական թվականներին կովկասյան հեղափոխական ինտելիգենցիայի շատ ներկայացուցիչներ ակտիվ կերպով գործում էին 1880-ական թվականներին նարոդնիկական (գլխավորապես նարոդություն) խմբակների և կազմակերպությունների մեջ: 1880-ական թվականներին նարոդության խմբակներում, այսպես որինակ, ակտիվ կերպով գործում էին Անդրկովկասցի ուսանողներ Սոֆիա Անդրեյևնան (Շուշու շրջանի Պանքենդ գյուղից, ամուսնացավ նարոդնայա Վոլյայի հայտնի ղեկավարներից մեկի՝ Ս. Կվյատկովսկու հետ)¹, իշխան Պավել Արդուսթյանը (յեղել է Մոսկվայի նարոդություն խմբակի ակտիվ անդամ, աշխատել է հայտնի Գերման Լոպատինի հետ, բանտարկվել և աքսորվել է Թբիլիսի), Արադյան Գրիգորը (յեղել է Մոսկվայի Պետրովսկայա հոգաբարձական Ակադեմիայի ուսանող, կապեր է ունեցել Գերման Լոպատինի հետ, բանտարկվել է 1884 թվին և մահացել է բանտում 1885 թ.), Թամարա Ադամյանը (հետագայում Ներսիսյան, սովորել է Պետերբուրգում, 1883 թ. վոստիկանություն գեպարտամենտի կարգադրությամբ աքսորվել է հայրենիք՝ Թբիլիսի), Բեկ-Մախմուդարովը և այլն: Որեսայում կազմակերպված նա-

¹ Տես՝ «Народовольцы 1880—90-х годов», том II, стр. 9.

բողոքողական խմբակում ակտիվ կերպով աշխատել ե թրիլիսեցի Հովհաննես Մանուչարյանը, վորն Ողեսայի ռադմագաշտային դատարանի կողմից դատապարտվել էր մահվան, բայց հետո, մահապատժի վորոշումը բեկանելու հետևանքով, դատապարտվեց տաս տարվա տաժանակիր աշխատանքների: Հետագրքիր ե, վոր ռուսական-հեղափոխական նարոդնիկական շարժման ազդեցության տակ Մոսկվայում կազմակերպվեց հայ ուսանողներից մի անլեզալ խմբակ՝ «Հայրենասերների Միություն» անունով: Խմբակի մեջ մտնում էյին Ներսես Աբելյանը, Դավիթ Ներսիսյանը, Թամարտ Աղամյանը, Միքայել Չալյանը և ուրիշները¹:

¹ «Հայրենասերների Միություն» խմբակը, վոր կազմակերպվեց 1881 թվին Մոսկվայում սովորող հայ ուսանողներից, բավական աշխույժ գործունեություն ցուցաբերեց: «Միությունը» հրատարակեց իր անլեզալ որգանը՝ «Ազատության ավետարեր» թերթը, վոր լույս տեսավ, սակայն, ընդամենը մի քանի համար: 1883 թ. սկզբներին «Միությունը» տաճկահայերի ազատագրության հարցին նվիրված մի կոչ հրատարակեց, վորն անլեզալ կերպով տարածվեց Յերևանում, Թբիլիսիում, Բաքվում և այլուր (տես ՀՊՄՀ Պետ. Կենտ. Արխիվ, Փոստ. Канцелярия нач. глав. управ. Главноком. Гражданск. частью на Кавказе, дело № 552): «Միությունն» իր վրա կրում էր նարոդնիկական իդեաների խիտ ազդեցությունը: «Միության» նպատակների մասին «Միության» որգան «Ազատության Ավետարեր» լրագիրը, որինակ, գրում էր հետևյալը.

«Հայրենասերների միության» պատգամներից մեկն է ազդերի համերաշխությունը... Ուստի մենք քարոզում ենք սերտ համերաշխություն Հայաստանում բնակվող ազդերի մեջ... Մենք հավասարաչափ հարգում ենք յուրաքանչյուր ազգի լեզուն, կրոնը և անկախությունը, յեթե միայն նա չի ձգտում հարստահարել ուրիշներին, արգելք չի դնում ուրիշների կանոնավոր զարգացման... Ժողովրդի ազատության հիմնաքարն է նրա տնտեսական անկախությունը: Ուստի «Հ. Մ.»-ն աշխատելու յե, վոր յերկիրը, հողը իր բնական հարստություններով, և աշխատանքի զործիքները դառնան աշխատավորների, քանվորների սեփականություն: Յեթե Հայաստանի աշխատող, արդյունաբերող ուժերը՝ յերկրագործը, արհեստավորը, մշակը տնտեսապես հարստահարվելու յեն,—«Հ. Մ.»-թյան աչքում վոչ մի քաղաքական ազատություն միտք և նշանակություն չունի: «Հ. Մ.»-թյանն ատելի յեն թե քյուրդ սպատակող շեյխը, թե թյուրք ճնշող պաշտոնյան և թե հայ հարստահարողները: Մենք թշնամի յենք ներկա անձնական, բաժան-բաժան կազմակերպության, վորտեղ տկարն անողնական է, իսկ ուժեղը՝ հարստահարող և անգութ: Մենք քարոզում ենք ընկերական միաբանություն, վորտեղ ընդհանուրը հոգում է յուրաքանչյուրի համար, իսկ յուրաքանչյուրը՝ ընդհանուրի համար: Անա թե ինչու բոլոր մասնավոր կալվածատերերի և պետության ձեռքի հողերը պետք է անցնեն համայնը»

Վերը բերված փաստերն արդեն կասկած չեն թողնում այն մասին, վոր իսկապես կովկասյան ռադնոչին, հեղափոխական ինտելիգենցիայի մի մասը 1870—80-ական թվականներին սերտ կերպով կապված էր ռուսական նարոդնիկների հետ, ընդգրկված էր համառուսական նարոդնիկական շարժման մեջ և ակտիվ կերպով գործում էր ռուսական նարոդնիկական-հեղափոխական խմբակներում: Կովկասյան ռադնոչին ինտելիգենցիայի այդ մասի ներկայացուցիչների շնորհիվ էլ հենց սկսվեց նարոդնիկական իդեաների տարածումն Անդրկովկասում: Կովկասյան ռադնոչին, հեղափոխական այդ ինտելիգենցիայի ներկայացուցիչների աշխատանքով գլխավորապես, նրանց ղեկավարումը թյամբ հենց 1870—80-ական թվականներին Անդրկովկասում կազմակերպվեցին նարոդնիկական մի շարք խմբակներ:

ների ձեռքը համայնքը միակ սեփականատերն է, միակ սպառողն է, վորովհետև նա միակ աշխատող, արդյունաբերողն է: Միևնույն ժամանակ համայնքները ներկայացնում են այն սկզբնական քաղաքական տարրերը, վորոնցից պետք է կազմվի ընդհանուր քաղաքական դաշնակցություն, ֆեդերացիա:

1875—1876 թ. թ. ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Նարողնիկական իրենաների տարածումն Անդրկովկասում սկսվում է 1870-ական թվականների սկզբներից: Այդ իրենաների առաջին տարածողն Անդրկովկասում հանդիսացավ Ռուսաստանի կենտրոններում (Պետերբուրգում, Մոսկվայում) և արտասահմանում (Ցյուրիխում, Ժնևում) սովորող անդրկովկասցի յերիտասարդու-թյունը (Իգնատի Իոսելյանի, Միխայիլ Կիպիանի, Նանեյվիլի և այլն): Վերագառնալով հայրենիք՝ ուսն նարողնիկների գաղափարները ժառանգած անդրկովկասցի այդ յերիտասարդու-թյունն աշխատում էր տարածել նարողնիկական իրենաներն Անդրկովկասի զանազան սեմինարիաների, գիմնազիաների ուսանողու-թյան և հեղափոխականորեն տրամադրված յերիտասարդու-թյան մեջ, ցանկով, այդպիսով, նարողնիկու-թյան առաջին սերմերն Անդրկովկասում: Նարողնիկական իրենաների տարածման համար պարտոտ հող էլին ներկայացնում, մասնավորապես, ինքնակրթու-թյան նպատակներով 1870—75 թ. թ. Անդրկովկասում հիմնված աշա-կերտական-ուսանողական խմբակները: Թբիլիսիում և Քութայի-սում կազմակերպված աշակերտական-ուսանողական այդ խմբակ-ներում ել հենց, առաջին հերթին, սկսում էլին իրենց պրոպա-գանդիստական աշխատանքները նարողնիկական իրենաներով տար-ված կովկասյան ինտելիգենցիայի ներկայացուցիչները:

Նարողնիկական գաղափարների պրոպագանդան Անդրկովկասում կատարվում էր և՛ ըանավոր, և՛ գրավոր ձևով: Ռուսաս-տանի կենտրոններից և արտասահմանից Անդրկովկաս վերադար-ձող ուսանողներն իրենց հետ բերում էլին նարողնիկական գրա-կանու-թյուն և ըստ հնարավորու-թյան տարածում այն: 1873 թ. արդեն վոստիկանական գործ սկսվեց Թբիլիսիի հոգևոր սեմինա-րիայում «հակակառավարական» գաղափարներ տարածելու մա-

սին: Այդ գործով, վորպես հեղափոխական գրականու-թյուն կար-դացողներ, մեղադրվում էլին սեմինարիայի սաներ՝ 18 տարեկան Դավիդ Կեղեկին, 20 տարեկան Իվան Մախվելաձեն, 18 տարեկան Ջուլյայելը, 22 տարեկան Շիո Շիուկովը և ուրիշները: 1870-ական թվականների սկզբներից Անդրկովկասում ծայր առած նարողնի-կական պրոպագանդայի շնորհիվ հենց կազմակերպվեցին նարող-նիկական առաջին խմբակներն Անդրկովկասում:

Նարողնիկական առաջին կազմակերպու-թյունն Անդրկովկա-սում ստեղծվել է Վրաստանում 1875 թվին¹: Նարողնիկական այդ կազմակերպու-թյունը, ըստ արխիվային նյութերի տվյալների, բաղկացած է յեղել յերկու խմբակներից, վորոնցից մեկը գործել է Թբիլիսիում, իսկ մյուսը՝ Քութայիսում: 1875 թվին հիմնված նա-րողնիկական այդ կազմակերպու-թյունն ունեցել է ինտերնացիո-նալ կազմ: Թե վորքան անդամներ է ընդգրկել այդ կազմակեր-պու-թյունն իր մեջ, այդ ճշգրտապես հայտնի չէ: Մոտավոր հաշ-վով միայն կարելի յե ասել, վոր այդ կազմակերպու-թյունն ունե-ցել է 68 անդամ: Կազմակերպու-թյան մասին կազմված ժանդար-մական գործից յերևում է, վոր նարողնիկական այդ կազմակեր-պու-թյան կապակցու-թյամբ վոստիկանու-թյունը, խուզարկու-թյուն-ների ու հարցաքննու-թյունների յենթարկելով մոտ 100 հոգի, պատանահանու-թյան է կանչել 54 հոգու: Յեթե ընդունենք, վոր վոստիկանու-թյան կողմից պատասխանատու-թյան կանչվածներն

¹ 1875 թվին Վրաստանում ստեղծված նարողնիկական այդ կազմակեր-պու-թյան վերաբերյալ կազմված ժանդարմական գործը զանվում է Վրաստանի հեղափոխական թանգարանում (տես Վրաստանի հեղափոխու-թյան թանգարանի արխիվը, Ֆոնդ № 36, գործ № 15, 17 և 18): Արխիվային այդ գործից առաջին անգամ մեկ փաստաթուղթ հրատարակվել է 1925 թվին «Հեղափոխու-թյան Ցա-քեզի» վրացական հանգեսում, իսկ այնուհետև այդ գործն ամբողջովին հրա-տարակվել է Ա. Մինգիրովայի կողմից 1930 թվին (տես «История классово́й борьбы», сборник статей, книга первая, приложение II, стр. 31—66, изд. ЗКУ, Тифлис, 1930 г.): Արխիվային այս գործի մասին իրենց աշխատու-թյուններում հիշատակու-թյուններ են անում Ս. Պունդաձեն (տես «Վրաց-ի նախնիք, պրոֆիլը» և «Սոցիալիզմի պատմու-թյունը») և Գեորգաձեն (տես նրա «Հասարակ. հարաբերու-թ. Վրաստանում» աշխատու-թյունը): 1875 թվին Վրաս-տանում հիմնված նարողնիկական այդ կազմակերպու-թյան մասին կազմված ժանդարմական գործից մենք, ներկա աշխատու-թյան մեջ, մեջբերումներ կա-տարում ենք այդ գործի՝ Ա. Մինգիրովայի կողմից կատարված հրատարակու-թյունից:

այսպես թե այնպես անդամակցել կամ համեմատյն դեպս համակրել են կազմակերպութեանը, ապա պետք է հետևեցնել, վոր 1875 թվին Վրաստանում ստեղծված նարոդնիկական կազմակերպութեան մեջ ընդգրկված էին, ըստ ժանդարմական գործի, հետևյալ անձնավորութեանները. 1. վորոշ զբաղմունք չունեցող Իգնատի Իոսելյանին, ավարտել էր Պետերբուրգի յերկրագործական ինստիտուտը. 2. իշխան, վորոշ զբաղմունք չունեցող Լեվան Չերկեզովը, սովորել էր Պետերբուրգի Տեխնոլոգիական ինստիտուտում, բայց չէր ավարտել այն. 3. քահանայի տղա, զբաղմունք չունեցող Երսեն Կալանդաձեն, ավարտել էր Ողուրգեթի հոգեվոր դպրոցը. 4. իշխան, վորոշ զբաղմունք չունեցող Իոսիֆ Մակայեվը, ավարտել էր Թբիլիսիի կրասիկական գիմնազիան. 5. քահանա Վասիլ Մամադովը, ավարտել էր Թբիլիսիի հոգևոր սեմինարիան. 6. ազնվական, իր կալվածքում հողագործութեամբ զբաղված Դավիդ Փուրցելաձեն, վորը սովորել էր Թբիլիսիի կրասիկական գիմնազիայում, բայց չէր ավարտել այն. 7. իշխան, վորոշ զբաղմունք չունեցող Ալեքսանդր Մակայեվը, վոր սովորել էր Թբիլիսիի կրասիկական գիմնազիայում, բայց չէր ավարտել. 8. ազնվական Վասիլ Դեկանոզով, ստացել էր տնային կրթութեանը և մասնավոր գործով աշխատել էր Թբիլիսիի Նոտարի գրասենյակում. 9. ազնվական, վորոշ զբաղմունք չունեցող Սերգեյ Շվեցովը¹, սովորել էր Արխանգելսկու գիմնազիայում, բայց չէր ավարտել այն. 10. ազնվական, վորոշ զբաղմունք չունեցող Ալեքսեյ Արդասանովը, ավարտել էր Պետերբուրգի յերկրագործական ինստիտուտը. 11. ազնվական, վորոշ զբաղմունք չունեցող Ռոման Պալենովը, սովորել էր Պետերբուրգի բժշկա-խիրուրդիական

¹ Սերգեյ Շվեցովի հեղափոխական գործունեությունը, բանասիրությունը և աշխատի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում ռուս գրող Վ. Գ. Կորոլենկոն՝ իր «История моего современника» աշխատության III հատորում. Կորոլենկոն Շվեցովի մասին «История юности Швецова» վերնադրով հատուկ մի գլուխ է նվիրել վերը հիշված իր աշխատության մեջ (տես՝ В. Г. Короленько, «История Моего современника», книга третья и четвертая, Гослитиздат, Москва, 1938 г., էջ 153—156)։ Կորոլենկոն իր այդ աշխատության մեջ ընդհանրապես արժեքավոր տեղեկություն է հաղորդում Անդրկովկասի նարոդնիկներ Իոսելյանու, Ստեփան Դարդաշյանի և ուրիշներին մասին։ Շվեցովը, վոր մահացավ 1930 թվին, թողել է հետաքրքիր հուշեր

ինստիտուտում, բայց չէր ավարտել այն. 12. տնային կրթութեանը ստացած Յելենա Կիպիանին. 13. վորոշ զբաղմունք չունեցող Արշակ Սաֆարյանը, սովորել էր Թբիլիսիի ռեալական զբաղմունքում, բայց չէր վերջացրել այն. 14. իշխանուհի, տնային կրթութեանը ստացած Սոփիա Ջորջաձեն. 15. Վրացիկավկազում վորպես մանկաբարձուհի աշխատող Խրիստինա Ռարոկը, ավարտել էր Պետերբուրգի մանկաբարձական ինստիտուտը. 16. վորոշ զբաղմունք չունեցող Դմիտրի Սոխիեյովը, ավարտել էր Պետերբուրգի յերկրագործական ինստիտուտը. 17. իշխան, վորոշ զբաղմունք չունեցող Իորամ Ջորջաձեն, սովորել էր Թբիլիսիի կրասիկական գիմնազիայում, բայց չէր վերջացրել այն. 18. ազնվական, ուսուցիչ Սաֆրոնի Մալախով, ավարտել էր Թբիլիսիի հոգեվոր սեմինարիան. 19. իշխան Լուարսաբ Երիստովը, սովորել էր Թբիլիսիի կրասիկական գիմնազիայում և իր կալվածքում զբաղվում էր յերկրագործութեամբ. 20. ազնվական, վորոշ զբաղմունք չունեցող Կոստանտին Նաչվալով, ավարտել էր Վորոնեժի գիմնազիան. 21. կոլեգիական քարտուղար Իոսիֆ Բակրաձեն, ավարտել էր Թբիլիսիի հոգևոր սեմինարիան. 22. ազնվական Իվան Խիմշիեյովը, ստացել էր տնային կրթութեանը և աշխատում էր վորպես դատական պրիստավ. 23. Միխայիլ Երիստով, ստացել էր տնային կրթութեանը և իր կալվածքում գյուղատնտեսութեամբ էր զբաղվում. 24. իշխան Գրիգոր Ավարով, ավարտել էր կրասիկական գիմնազիան Բուխարայում և իր կալվածքում գյուղատնտեսութեամբ էր զբաղվում. 25. քահանայի տղա, ուսուցիչ Իոսիֆ Ծվերաձեն, ավարտել էր Թբիլիսիի հոգևոր սեմինարիան. 26. Մոսկվայի Պետրովսկայա Յերկրագործական Ակադեմիայի ուսանող, իշխան Լեոնիդ Շոալկովը. 27. ազնվական Կոստանտին Կիպիանին, սովորել էր Թբիլիսիի կրասիկական գիմնազիայում, բայց չէր ավարտել այն. 28. ուսուցիչ Մոզդոկում, Թբիլիսիի հոգևոր սեմինարիան ավարտած Գեորգի Ուսուրգաուրի. 29. մասնավոր պանսիոնում ուսում առած որիորդ Ոլգա Սաֆարյանը. 30. որիորդ Վարվառա Սաֆարյանը, սովորել էր Թբիլիսիի կանանց գիմնազիայում, բայց չէր վերջացրել այն. 31. տնային կրթութեանը ստացած Պավել Յախնեյովը, աշխատում էր Վրացիկավկազում. 32. Ստավրոպոլի կանանց գիմնազիան ավարտած որիորդ Լյուբով Սերբերյակովան, մասնավոր դասեր էր տալիս

Թբիլիսիում. 33. կուղիական քարտուղար Իբրահիմ Շանայեվը ավարտել էր Պետերբուրգի Յերկրագործական ինստիտուտը և աշխատում էր վորպես անտառապահ Թերեքի շրջանում. 34. Մ. Յու. Մարկուզենը, սովորել էր Պետերբուրգում և աշխատում էր Բուլթայի շրջանային դատարանում վորպես քարտուղար. 35. Նիկոլայ Մխեդրովը, ավարտել էր Թբիլիսիի հոգևոր սեմինարիան և վորպես գյուղական ուսուցիչ աշխատում էր Սղնախի գավառում. 36. Իվան Ռոստոմովը, ավարտել էր Թբիլիսիի հոգևոր սեմինարիան և վորպես գյուղական ուսուցիչ աշխատում էր Թելավի գավառում. 37. Ալեքսանդր Յլավետաձեն, ավարտել էր Թբիլիսիի հոգևոր սեմինարիան և աշխատում էր վորպես գյուղական ուսուցիչ Թբիլիսիի գավառում. 38. պետական գյուղացի Սեմյոն Մայսուերաձեն, կրթությունն ստացել էր մասնավոր դպրոցում և աշխատում էր Թբիլիսիի դեղատանը. 39. վորոշ զբաղմունք չունեցող, իշխան Դավիթ Թարխան-Մուրավի, սովորել էր Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում, բայց չէր ավարտել այն. 40. Տիտուլյար խորհրդական Անտոն Փուրցելաձեն, սովորել էր Ուրլովի «Կադետսկի կորպուս» կոչված զինվորական դպրոցում և աշխատում էր պետական գյուղերի կովկասի գլխավոր վարչությունում. 41. Ախալցխայի հեախոսն գնդի զինվորական բժիշկ կոչված Պուրցելաձեն. 42. գիմնազիայի աշակերտ Աբաշևիվ. 43. դիմնազիայի աշակերտ Գոշիյեվը. 44. ուսուցիչ Տամարելիսին. 45. Պետերբուրգի համալսարանի ուսանող կոնստանտին Բակրաձեն. 46. վորոշ զբաղմունք չունեցող, քահանայի տղա Ստեփան Չրելայեվը, սովորել էր Թբիլիսիի հոգևոր սեմինարիայում, բայց չէր ավարտել այն. 47. աղնվական Գրիգորի Գաբայեվը, սովորել էր Պետերբուրգի բժշկա-խիրուրդիական Ակադեմիայում. 48. Պետերբուրգի բժշկա-խիրուրդիական Ակադեմիայի ուսանող Նիկոլայ Սուդազովը. 49. Պետերբուրգի բժշկա-խիրուրդիական Ակադեմիայի ուսանող Ալեքսանդր Նանեաշվիլին. 50. Պետերբուրգի Տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Ալեքսանդր Վերմիշյանը. 51. Պետերբուրգում ուսանող Ալեքսանդր Յեվանզուլյանը. 52. վորոշ զբաղմունք չունեցող, աղնվական Դավիդ Զեդզենիձեն, ավարտել էր Բուլթայի գիմնազիան. 53. աղնվական Նիկոլայ Բիկովը, սովորել էր Յեկատերինոպոլի գիմնազիայում, մասնավոր դասեր էր տալիս Թբիլիսիում. 54. աղնվա-

կան Ադամ Բրժոգովսկին, սովորել էր Պետերբուրգի Լեոնային ինստիտուտում և մասնավոր դասեր էր տալիս Թբիլիսիում:

1875 թվին Վրաստանում ստեղծված նարոդնիկական կազմակերպության անդամների թիվը, սակայն, վերը հիշված 54 անձնավորություններով չէր սահմանափակվում: Ժանդարմական գործում կա մի փաստաթուղթ, վորից յերևում է, վոր կազմակերպությունն ունեցել է նաև մի շարք անդամներ, վորոնց անունները վերը բերված ցուցակում չեն հիշատակվում: Վոստիկանություն գործակալ Գեորգի Իոսելյանու՝ վոստիկանությունը տված ցուցմունքներից յերևում է, վոր կազմակերպության անդամներ են յերևել նաև Իսիգոր Կիկոձեն (քահանայի տղա, Պետերբուրգի բժշկա-խիրուրդիական ինստիտուտի ուսանող), Միխայիլ Կիպիանին (աղնվական, սովորել էր Պետերբուրգի Տեխնոլոգիական ինստիտուտում), Շիուկովը, ուսանող Չիչինաձեն, Վասիլիյ Լոսարերիձեն, Անտոն Լորդկիպանիձեն, Սերգեյ և Իվան Մեսխիները, Վարլամ և Պլատոն Գորբչվաձեները, Ալեքսանդր Մարգանիան, Կոնստանտին Չիչուան, Թեյմուրազ Լեժավան և Իլյա Բախտաձեն:¹

1875 թվին Վրաստանում հիմնված նարոդնիկական կազմակերպությունը, այսպիսով, մոտավոր հաշվով ուներ 68 անդամ², վորոնցից 48 վրացի, 5 հայ (Արշակ, Վարվառե, Ուրա Սաֆարյաններ, Ալեքսանդր Վերմիշյան և Ալեքսանդր Յեվանզուլյան), 4 ադրբեջանցի, իսկ 5—այլ ազգություններից: Հետաքրքիր է, վոր այդ կազմակերպության անդամների մեջ կային 6 կին: Կազմակերպության անդամների մի մասը սովորել էր Պետերբուրգի զանազան ուսումնական հաստատություններում,

¹ Վոստիկանական գործակալ Յեդուր Իոսելյանին վորպես կազմակերպության անդամ հիշատակում է նաև վրացական հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Նիկոլայ Նիկոլաձեյի անունը: Հնարավոր է, վոր Նիկոլաձեն կապ ունեցած լինի կազմակերպության հետ, բայց Նիկոլաձեն Անդրիովկասում գործող կազմակերպության անդամ չէր կարող լինել, վորովհետև նա նարոդնիկական այդ կազմակերպության հիմնադրման ու գոյության տարիներին գանվում էր արտասահմանում:

² Ա. Մնեգիրովան կազմակերպության անդամների ընդհանուր թիվը հաշվում է 54 (տես «История классовой борьбы в Закавказье, приложение 2, էջ 29»), վոր, անկասկած, սխալ է:

ինչպես նաև Մոսկվայի Պետրովսկայա Հողագործական Ակադեմիայում: Կազմակերպության անդամների խոշոր մասը Քրիստի ու Քուլթայիսի հոգևոր սեմինարիաների ու գիմնազիաների նախկին սաներն էին:

Անդրկովկասի նարոդնիկական այդ անդրանիկ կազմակերպության ստեղծման նախաձեռնությունը պատկանել է 1875 թվին Մոսկվայում գործող Սոֆիա Բարդինայի հայտնի խմբակի անդամներ՝ կովկասցի Զարադարուն, Յիցիանովին, Ջղանովիչին, Թումանովային և ուրիշներին: 1875 թվի նարոդնիկական խմբակի ստեղծման գործում մասնավորապես նշանակալից դեր է խաղացել Քարդինայի խմբակի անդամ Յիցիանովը, վոր 1875 թվին Մոսկվայից Քրիստի յեր ժամանել¹:

1875 թվին Անդրկովկասում ստեղծված նարոդնիկական այդ կազմակերպության անմիջական հիմնադիրները յեղել են, ինչպես այդ ցույց են տալիս արխիվային նյութերը, Պետերբուրգի Յերկերագործական Ինստիտուտն ավարտած Իզնատի Իոսելյանին, Պետերբուրգի բժշկական-խիրուրդիական ակադեմիայի ուսանող Իսիդոր Կիկոձեն և Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում սովորող Միխայիլ Կիպիանին: Անդրկովկասի նարոդնիկական կազմակերպության այս յերեք հիմնադիրներն էլ 1874 թվականին պատկանել են Պետերբուրգում գործող «Կովկասցիներ» նարոդնիկական անլեզալ խմբակին: Նրանք ակտիվ կերպով մասնակցել են Պետերբուրգի ուսանողական հեղափոխական շարժումներին: Կազմակերպության աշխատանքները կազմակերպողը և ճանաչված ղեկավարը հանդիսացել է Իզնատի Իոսելյանին: Կազմակերպության ակտիվ գործիչները, ըստ ժանդարմերիական գործի, յեղել են Փուրցելաձեն, Շուբկովը, Զիչինաձեն, Վասիլիյ Լուսաբերիձեն, Անտոն Լորդկիպանիձեն, Սերգեյ և Իվան Մեսխիները և այլն:

1875 թվին Անդրկովկասում հիմնված նարոդնիկական այդ կազմակերպության նպատակադրումը յեղել է նույնը, ինչ նպատակ վոր ունեցել են այդ շրջանում Թուսաստանի կենտրոններում (Պետերբուրգում, Մոսկվայում) գործող նարոդնիկական խմբ-

բակները: Վերջիններս նմանութամբ Անդրկովկասյան նարոդնիկական այդ կազմակերպությունն էլ հեղափոխական ինտելիգենցիային պրոպագանդա յե արել՝ գնալ ղեպի դյուղը, ժողովուրդը, աշխատել նրա մեջ, տարածել հակակառավարական իդեաներ, ձեռնարկել նարոդնիկական «սոցիալիզմի» պրոպագանդան և կազմակերպել, նախապատրաստել գյուղացիական յելույթներ, ապստամբություններ՝ տիրող կարգերը տապալելու նպատակով: Անդրկովկասյան նարոդնիկական այդ կազմակերպության մասին կազմված վոստիկանական գործում ասվում է, վոր այդ կազմակերպությունը նպատակ է ունեցել.

«Արտասահմանից և Պետերբուրգից ուղարկվող զանազան հակակառավարական հրատարակությունները թարգմանել տեղական լեզվով և տպել մոտ ժամանակներս ստացվելիք տպագրական ձեռնարագայինի միջոցով: Աշխատել այդ հրատարակությունները տարածել գյուղական բնակչության մեջ, մեկնաբանել նրանց իմաստը, և յերբ բնակչությունը բավականաչափ նախապատրաստված կլինի, պայմանավորվել իրար հետ, վոր ստացված ազդանշանի համաձայն միաժամանակյա ընդհանուր ապստամբություն բարձրացվի՝ ծառայողներին (ծառայողներ բառը գործ է ածվում, ըստ յերեկույթին, չինոֆիլիության իմաստով. Մ. Ն.), հոգևորականությանը և արևմտական-կաթածատերերին, վորոնցից դժգոհ են, վոչնչացնելու նպատակով»¹:

Անդրկովկասի նարոդնիկական 1875 թվականի կազմակերպության Քուլթայիսի խմբակի հիմնադրման մասին վոստիկանական այդ նույն գործում, վորը կազմված է 1876 թվականի ոգոստոս ամսին Քուլթայիսի նահանգապետ Մալաֆեյսկի կողմից, ասված է.

«Ներկայումս այստեղ գոյություն ունեցող ընկերության հիմքը, վորքան հայտնի յե, դրված է բժշկա-խիրուրդիական ակադեմիայի ուսանող Իսիդոր Կիկոձեյի՝ Պետերբուրգից գալու և ուսանող Միխայիլ Կիպիանու՝ Քրիստիից գալու պահից՝ անցյալ տարի:

Իբրև ընկերության անդամներ ներգրավում էին առավելապես յերիտասարդ մարդիկ—մի մասը կաշաքով, մյուս

¹ См «Деятели революционного движения в России». Био-библиографический словарь, том II, вып. 4, с. 210.

¹ См «История классовой борьбы», кн. I, приложен. II, с. 31.

մասի մեջ ատելութուն տուջացնելով գեպի կառավարու-
թյունն ու գոյությունն ունեցող կարգերը, և հրապուրելի հա-
վաստիացումներով, թե միապետական իշխանությունը վոչըն-
չացնելուց հետո բոլորը լինելու յեն հավասար, ոգովելու
յեն միատեսակ հարատւությունից, պետական վարեւ պար-
հակի—վոչ դրամական և վոչ ել նատուրալ— յենթակա չեն
լինելու, ընդ վորում ձգտել են հաստատել, թե Ռուսաստա-
նի գյուղական բնակչությունը, արդեն գրեթե 37 նահանգ,
պատրաստ և ապտամբության, և թե գորքերը լինելու յեն
նրանց կողմը¹:

Անդրկովկասի նարոզնիկների այդ կազմակերպությունը
թեև գոյությունն ունեցավ մոտավորապես մեկ տարի և կազմա-
կերպչորեն զեռա լրիվ ու վերջնական ձևավորում չստացավ, այ-
նուամենայնիվ, ձեռնարկեց բավական ակտիվ գործունեյություն:
1875 թվականի նարոզնիկական այդ կազմակերպությունն Ան-
դրկովկասում իր պրոպագանդային ծավալուն բնույթ տալու նպա-
տակով բավական հաջող կերպով կազմակերպեց անլեզու գրակա-
նություն ստանալու և տարածելու գործն Անդրկովկասում:

Կազմակերպությունը համապատասխան գրականություն
ստանում էր Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից (գլխա-
վորապես Մոսկվայից և Պետերբուրգից) և արտասահմանից (Ճյու-
րիխից ու Ժնևիցի):

Ինչպես Ռուսաստանից, նույնպես և արտասահմանից ստաց-
վող գրականության փոխադրման գործում Անդրկովկասի նարոզ-
նիկներին կարևոր ոգնություն էր ցույց տալիս Ռուսաստանի
կենտրոններում և Ժնևում ու Ճյուրիխում սովորող կովկասցի
առաջավոր յերիտասարդությունը: Արտասահմանից ստացվող գրա-
կանությունն ուղարկվում էր գլխավորապես Տաճկաստանի (թյուր-
քիայի) վրայով:

Անդրկովկասում արտասահմանից և Ռուսաստանից ստացվող
հակացարական, հեղափոխական այդ գրականությունը բաղկա-
ցած էր զանազան գրքույկներից, թերթերից և կոչերից: Վոստի-
կանական գործի ավյալների համաձայն, Անդրկովկասյան նարոզ-
նիկներն ի թիվս բազմաթիվ գրքույկների ստացել են «Хитрая

¹ Տես «История классовой борьбы», кн. I, приложен. II, էջ 31:

Механика», «Сказка о четырех братьях и об их приключе-
ниях», «Бог то бог, да и сам не будь плох», «Самарский го-
лод», «Что надо делать войску», «Анархия», «Государствен-
ность и анархия», «Декабристы», «История развития Ин-
тернационала», «Задачи революционной пропаганды в Рос-
сии» և այլ գրքույկներ: Ստացվող թերթերի և կոչերի մեջ յե-
ղել են «Вперед», «Работник», «Народное дело» պարբերա-
կանները, «К офицерам русской армии» կոչը և այլն:

Ռուսաստանից և արտասահմանից ստացված այդ անլեզու
գրականությունը յեղել և գերազանցապես ուսերեն լեզվով: Ան-
դրկովկասի նարոզնիկական կազմակերպությունը վորոշ աշխա-
տանք և վորձեր է կատարել այդ գրականության մի մասը տե-
ղական լեզուներով թարգմանելու ուղղությամբ: 1876 թվին, որի-
նակ, վրացերեն լեզվով թարգմանվեցին «Хитрая механика», «Бог
то бог, да и сам не будь плох» գրքույկները: Թարգմանական
գրականության հրատարակման գործը լայն հիմքերի վրա դնե-
լու նպատակով անդրկովկասյան նարոզնիկական կազմակերպու-
թյունն աշխատել է արտասահմանից ստանալ տպագրական մե-
քենա, վորի համար և նախորոք հավաքվել և վորոշ գումար: Բայց
Անդրկովկասի նարոզնիկների այդ նպատակը չիրականացավ, վո-
րովհետև նարոզնիկական այդ կազմակերպությունը ցարական
վոստիկանության կողմից շուտով հայտարերվեց և լիկվիդացիայի
յենթարկվեց:

1875 թվին Անդրկովկասում հիմնված նարոզնիկական կազ-
մակերպությունը գրավոր պրոպագանդայի հետ միասին ծավա-
լում էր նաև բանավոր պրոպագանդա: Ինչպես յերևում է վոս-
տիկանական գործի ավյալներից, Անդրկովկասի նարոզնիկները
ուս նարոզնիկների նմանությամբ շեշտը դնում էին բանավոր
պրոպագանդայի վրա: Կազմակերպության անդամներից շատերը
գյուղ էին գնում և այնտեղ ծավալում իրենց պրոպագանդան: Մինչ
այժմ հայտարերված արխիվային նյութերում վորոշ, թեև վոչ
լրիվ, տեղեկություններ կան գյուղում, գյուղացիության մեջ աշ-
խատող անդրկովկասյան նարոզնիկների պրոպագանդայի բովան-
դակության և մեթոդների մասին: Շտաբս-կապիտան Խրիստոֆո-
րովը «Անդրկովկասյան յերկրի սահմաններում սոցիալ-հեղափո-
խական խմբակ կազմակերպելու մասին» խորագիր կրող իր գե-

կուցադրում նկարագրում է հետևյալ եպիգրաֆը, վորը վորոշ գազափար և տալիս Անդրկովկասի հարողնիկների պրոպագանդայի մասին.

«Հունիսի 20-ին գյուղացի Սեմյոն Գեորգիև Գոգելի-
ձեն, յերեկոյան, ձիով գնում էր Զուգդիդից և, Քուլթայիսի
ուղղութեամբ դեռ մի կայարան չանցած, հանդիպեց Իոսիֆ
Լոլուային, վորն անկզ ձայնով հրամայեց նրան հետևել իրեն
և բերեց Սեթի գյուղը մի խրճիթի մոտ, վոր պատկանում է
Գորախիձեյին. այնուհետև նրան թողնելով այնտեղ, հարց-
րեց, թե ինչ է կատարվում Զուգդիդիում և, իմանալով, վոր
այնտեղ գյուղացիները խռովութուն են սարքում, ասաց.—
«Այդ վոչինչ, տեսնենք, թե ինչ խռովութուն է լինելու
թե Զուգդիդիում և թե ամեն տեղ. միթե սա լավ չէ: Միթե
սա բարի գործ չէ: Որինակ՝ դու փողի կարիք ունես, դու
60 կոպեկ ունես ցամաք հացի համար և միայն այդքան,
իսկ յերբ մեզ մոտ լինի մի ընդհանուր գետեղարան, վոր-
տեղ ամեն մեկը դնի իր արտադրած բաները և վորտեղ պահ-
վեն մեր աշխատանքի բոլոր պտուղները, այսինքն՝ վար-
պետների, արհեստավորների, ֆարրիկանտների, հողագործ-
ների և ուրիշների արտադրանքները, ապա այն ժամանակ
բոլորս էլ կապրենք այնպես, ինչպես մեզ մոտ՝ Քուլթայի-
սում ապրում էր Լեվաշովը, և մեզ բոլորովին էլ պետք չե
թագավորը»: Այնուհետև նրան մի բաժակ թեյ տվեց և թո-
ղեց, վոր գնա. այնտեղ կար նաև մի ինչ-վոր կին»¹:

Անդրկովկասի նարողնիկների պրոպագանդայի բովանդա-
կության մասին շտաբս-կապիտան Սերխատոֆորովի այդ նույն
դեկտեմբերին մեջ այնուհետև ասվում է հետևյալը.

«Պրոպագանդիստները (խոսքը վերաբերում է Անդրկով-
կասի նարողնիկներին.— Մ. Ն.) ժողովրդի մեջ անց են կաց-
նում հետևյալ գաղափարները.— թագավորի որենքով վկայա-
կանների, պատենտների և այլ բաների համար գանձվում
են գանազան անուղղակի հարկեր— հսկայական գումարներ,
ընդվորում գանձման նորման տարեցտարի ավելացվում և
և հնարվում են նոր հարկեր, վորոնց ամբողջ ծանրութունն

¹ Տես նույն տեղ:

ընկնում է ժողովրդի վրա, վորի կաշին քերթում են, յեթե
նա միջոցներ չի ունենում այդ հարկերը վճարելու: Հողի
մշակման, ցանկու, հնձելու, կալսելու, վառելիքի համար
ծառ կտրելու վրա ժողովրդի թափած քրտնաջան աշխա-
տանքի արդյունքը, վորն անհրաժեշտ է մարդու գոյութունը
պահպանելու համար, ամբողջովին գանձարանն ու կավա-
ծատերերն են վերցնում, իսկ ժողովուրդը շարունակում է
թշվառանալ և տանջվել յուր աշխատանքում:

Ինչո՞ւ թագավորը և ամբողջ ինտելիգենցիան (ինտե-
լիգենցիա բառն այստեղ գործ է ածվում, ըստ յերևույթին,
պաշտոնեյութուն, չինովնիկութուն իմաստով.— Մ. Ն.)
նստած են ժողովրդի վրին, մի ժողովուրդ, վորը հեծում
է լծի տակ, մինչդեռ, յեթե թագավորը չլինի, չլինեն կա-
ռավարութունն ու նրա որենքները, այն ժամանակ կհա-
վասարվեն իրավունքները, բունի տուրք չի լինի այլևս, ժո-
ղովրդի կարիքների համար կլինեն ընդհանուր միջոցներ,
վորոնցով և նա ըստ կարիքի կբավարարի իր պահանջները:
Ուստի անհրաժեշտ է այդ ցանկանալ և հասնել դրան, նկատի
ուենենալով ժողովրդի ընդհանուր բարբութունը, մի ժո-
ղովուրդ, վորն արդեն կաշխատի իր համար: Քահանաները,
ի շահ թագավորի, սուտ քարոզում են, վոր նա՝ թագավորը,
կարգված է աստծուց, և վոր նախախնամութունը ժո-
ղովրդի բախտը հանձնել է նրան, վորպեսդի ժողովրդին
խորին հնազանդության և այդ լծի տակ անմոռնչ ու տան-
ջալից շարչարանքի մեջ պահի»¹:

Վերը բերված քաղվածքներից կարելի չէ յեզրակացնել, վոր
Անդրկովկասի նարողնիկների պրոպագանդան մոտավորապես նույն
բովանդակութունն է ունեցել, ինչ վոր իր ժամանակի ուսակա-
նարողնիկության պրոպագանդան: Ռուս նարողնիկների նման
անդրկովկասցի նարողնիկներն էլ իրենց պրոպագանդայի ըն-
թացքում առաջ եյին քաշում ցարիզմի տապալման անհրաժեշ-
տության հարցերը և մանր-բուրժուական, գյուղացիական «սո-
ցիալիզմի» մշուշապատ իդեաները:

Անդրկովկասի նարողնիկների պրոպագանդան, ուսև նարող-

¹ Տես նույն տեղ:

նիկները պրոպագանդայի նման, ընդհանուր առմամբ մնում եր ձայն բարբառո հանապատի: Գյուղացիական լայն խավերի համար անհասկանալի էին մնում նարոդնիկական «սոցիալիզմի» վոչ ունալ և ոտար գաղափարները, վորի համար և նրանք նարոդնիկությունից հետո էին կանգնում: Անդրկովկասի նարոդնիկները, սակայն, վորոշ դեպքերում ունեցան մասնակի հաջողություններ: Շտաբս-կապիտան Խրիստոֆորովի վերը հիշված գեկուցադրի մեջ պատմվում է այն մասին, թե ինչպես 1876 թ. հուլիս ամսին Ողուրգեթի գավառի նազուամարի գյուղում նարոդնիկներն իրենց համակրող գյուղացիների ժողով են կազմակերպում, վորին ներկա յեն լինում 25 գյուղացի: Ժողովին ներկա յեղած գյուղացիները, ինչպես հաղորդում է Խրիստոֆորովը, համաձայնում են նարոդնիկ պրոպագանդիստի հետ և իրենց պատրաստակամությունն են հայտնում մասնակցելու սպասվող գյուղացիական ապստամբությունը: Գյուղացիների մեջ նարոդնիկների ունեցած մասնակի հաջողություն մասին մի փաստ բերում է նաև Թրիխսիի նահանգական ժանդարմական վարչություն պետը՝ Կովկասի փոխարքային գրած իր գեկուցադրի մեջ: 1876 թ. սեպտեմբերի 5-ի թվակիր իր գեկուցադրում Թրիխսիի նահանգական ժանդարմական վարչության պետը հաղորդում է, վոր Թաչում, Մինգրելիայում և Գորու գավառում մի քանի յերիտասարդ նարոդնիկներ համոզել են գյուղացիներին, վորպեսզի նրանք պատրաստվեն և ազդանշանի դեպքում անմիջապես ապստամբեն: Թրիխսիի նահանգական ժանդարմական վարչության պետի ասելով՝ ապստամբություն ազդանշանը վորոշված է յեղել տալ պատերազմ սկսվելու դեպքում:

Անդրկովկասի նարոդնիկական կազմակերպությունը պրոպագանդա յեր ծավալում նաև ինտելիգենցիայի, հատկապես ուսուցիչների և զանազան դպրոցական հաստատություններում սոցիոլոգ յերիտասարդությունից մեջ: Նարոդնիկական պրոպագանդան հաջողություն ունենում էր հատկապես հենց այդ շերտերի մեջ: 1876 թ. կազմակերպությունից դեկավարները հաշվում էին, վոր Թրիխսիում ունեն մոտ 200 համակրող, իսկ Քուլթայիսում՝ 30: Բնորոշ է, վոր այդ համակրողների ճշող մեծամասնությունն ուսանողներ և ուսուցիչներ էին: Նարոդնիկական պրոպագանդան, սակայն, ավելի հաջողություն ունենում էր մասնավորապես գյուղ-

ղական ուսուցիչները մեջ, վորոնցից շատերը դառնում էին նարոդնիկական կազմակերպությունից ակտիվ անդամներ:

Անդրկովկասի նարոդնիկական կազմակերպությունը, ինչպես այդ յերում է արխիվային փաստաթղթերից, հաճախակի իր անդամների խորհրդակցություններ և ժողովներ և հրավիրել, վորոտեղ քննվել են կազմակերպչական բազմատեսակ հարցեր: 1876 թվի մայիսի 23-ին, որինակ, Քուլթայիսում, հրավիրվել է մի խորհրդակցություն, վորտեղ քննություն են առնվել հետևյալ հարցերը. 1. ընդհանուր գրամարկդ հիմնելու խնդիրը. հարց է դրված յեղել կոչեր տարածելու, կազմակերպությունից մեջ նոր անդամներ ընդգրկելու և ընդհանրապես պրոպագանդիստական աշխատանքներ կատարելու համար կազմակերպություն անդամներից, կազմակերպվելիք ներկայացումներից, պարահանդեսներից և այլ ազդուներից գումար հավաքել. 2. գանձապահ ընտրելու հարցը և 3. գյուղացիությունից մեջ հաջող պրոպագանդա տանելու նպատակով ծրագիր կազմելու խնդիրը: Վերը հիշված շտաբս-կապիտան Խրիստոֆորովի գեկուցման մեջ նարոդնիկների կազմակերպած հավաքույթ-ժողովների մասին ասվում է, վոր կազմակերպություն անդամները Թրիխսիում գրեթե ամեն ուր, որը կազմակերպվել է հավաքույթ-ժողովներ են կազմակերպել, վոր այդ ժողովներում հավաքույթ-ժողովներ են կանցել, վոր անլեզալ ժողովի մասնակիցներն անգամ միշտ ծիծաղել են ըթամիտ, գլխի չընկնող վոստիկանությունից վրա:

Հետաքրքիր է, վոր կազմակերպությունից մեջ ակտիվ աշխատանք են կատարել նաև մի քանի գյուղացիներ, ինչպես, որինակ, գյուղացի Շավիշվիլին, վորը հատկապես մեծ աշխատանք է կատարել արտասահմանից Բաթումի վրայով անլեզալ գրականություն փոխադրելու գործում¹:

1876 թվին Անդրկովկասում ստեղծված նարոդնիկական կազմակերպությունը բավական սերտ, ուժեղ կապ է ունեցել այն ժամանակ Պետերբուրգում և Մոսկվայում սոցիոլոգ կովկասցի հեղափոխական ուսանողների և, նրանց միջոցով ել՝ Պետերբուրգում և Մոսկվայում գործող սուսական նարոդնիկական խմբակների հետ: Անդրկովկասի նարոդնիկական կազմակերպությունը սխտե-

¹ «Био-библиографический Словарь», т. I и II, выпуск 4, стр. 1985.

մատիկ կապ է ունեցել, որինակ, Պետերբուրգում և Մոսկվայում գտնվող կովկասցի Ջաբաղարու, Յիցիանովի, Չեկոիձեյի, Ջղանովիչի, Ղարզաշյանի, Բայրախտարովի, Այվազյանի և ուրիշների հետ, վարոնք բուրն ել, ընդգրկված լինելով ռուսական նարոգնիկական խմբակների մեջ, անլեզալ աշխատանք ելին տանում Ռուսաստանի կենտրոններում։ Ռուսաստանի կենտրոններում և Անդրկովկասում գործող նարոգնիկների միջև կապը պահպանվել է ինչպես գրավոր ձևով, այնպես ել կենդանի՝ մարդկանց միջոցով։ 1876 թվին, որինակ, Անդրկովկասի նարոգնիկական կազմակերպության ղեկավարներից և հիմնադիրներից մեկը՝ Իգնատիյ Իոսելյանին Պետերբուրգ և գնում՝ Անդրկովկասում կատարած իրենց աշխատանքների մասին ինֆորմացիա տալու և այնտեղ Ռեզնիկով ազգանունն ունեցող մի անձնավորությունից դումար ստանալու համար։ Կապը Մոսկվայի հետ այնքան ուժեղ է յեղել, վոր Անդրկովկասի նարոգնիկների կազմակերպությունը Սոֆիա Բարդինայի նարոգնիկական խմբակից 700 ուրբլի փող և ստացել Անդրկովկասում նարոգնիկական պրոպագանդան ավելի հաջող կերպով կազմակերպելու համար։ Ուժեղ կապի առկայությունը պետք է բացատրել նաև այն հանգամանքը, վոր մի քանի ռուս նարոգնիկներ Պետերբուրգից Անդրկովկաս ժամանելով ակտիվ կերպով աշխատել են նարոգնիկական կազմակերպության մեջ։ 1876 թվի ոգոստոսին, որինակ, Պետերբուրգից Գուլիսիսի յե յեկել Պետերբուրգի ռուսանող, նարոգնիկ Գլուխովսկոյը, բերելով իր հետ անդրկովկասյան նարոգնիկների համար անլեզալ գրքեր։ Նույն այդ 1876 թվին Թրիխսի յե ժամանել Պետերբուրգի վոստիկանությունից կողմից վորոնվող Սերգեյ Շվեցովը։ Տեղավորվելով Թրիխսիի տպարաններից մեկում՝ Շվեցովը մասնակցել է Անդրկովկասի նարոգնիկների կազմակերպության աշխատանքներին։

Անդրկովկասի նարոգնիկական կազմակերպությունը չնայած անմիջական ղեկավարություն և ցուցմունքներ ստանում եր Պետերբուրգից և Մոսկվայից, սակայն, կազմակերպչորեն ինքնուրույն եր։ Այդ եր պատճառը, վոր 1876 թվին Մոսկվայում և Պետերբուրգում գործող անդրկովկասցի նարոգնիկներ Ջաբաղարին, Յիցիանովը, Ջղանովիչը և մյուսներն Անդրկովկասի նարոգնիկներին առաջարկում ելին կազմակերպչորեն միացնել, միավորել անդր-

կովկասյան նարոգնիկական կազմակերպությունը ռուսական կենտրոնական նարոգնիկական կազմակերպությունների հետ։

Անդրկովկասի նարոգնիկական՝ 1875 թվին հիմնված՝ կազմակերպությունը, ինչպես յերևում է արխիվային ղոկումենտներեց, կապ է ունեցել Վլադիկավկազում (այժմ Որջոնիկիձե քաղաքը) գործող նարոգնիկական մի խմբակի հետ։ Վլադիկավկազում հիմնված նարոգնիկական այդ խմբակի մասին առայժմ քիչ բան է հայտնի, բայց արդեն հայտարերված արխիվային ղոկումենտներից պարզվում է, վոր Անդրկովկասի նարոգնիկական կազմակերպության անդամներից վոմանք Թրիխսիից և Գուլիսիսից հաճախ Վլադիկավկազ են գնացել՝ այնտեղի նարոգնիկական խմբակի աշխատանքներին մասնակցելու նպատակով։ Ժանդարմական գործում ասված է, վոր անդրկովկասյան նարոգնիկները Վլադիկավկազից ստացել են 3000 ուրբլի։ Այդ փաստի վրա հիմնըվելով՝ հնարավոր է յենթադրել, վոր Վլադիկավկազում գործող նարոգնիկական խմբակը բավական ուժեղ է յեղել։

Հետաքրքիր է հիշատակել այն հանգամանքը, վոր վոստիկանություն Անդրկովկասի նարոգնիկներին խուզարկելու ժամանակ մի քանիսի մոտ գտել է ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատ Նիկոլայ Գավրիլովիչ Չերնիշևսկու նկարը։ Կազմակերպությունից վոմանք, ինչպես յերևում է փաստաթղթերից, յեռանդով գրադվել են սոցիալիզմի ուսումնասիրությունը։ Նրանք մտադրություն են ունեցել ուսումնասիրել սոցիալիստական մտքի ներկայացուցիչներին և նրանց մասին ղեկուցումներ կարդալ։

1875 թվականին Անդրկովկասում հիմնված նարոգնիկական կազմակերպության աշխատանքի հիմնական վայրերը, ինչպես յերևում է փաստաթղթերից, յեղել են Թրիխսին, Գուլիսիսը, Գորին, Թելավը, Մինդրեխիան և Ոգուրգեթի գավառը։ Այդ կազմակերպության գործունեությունն ընդհանուր առմամբ սահմանավակվել է Վրաստանով։ Կարելի յե յենթադրել, իհարկե, վոր ինտերնացիոնալ կազմ ունեցող նարոգնիկական այդ կազմակերպությունը վորոշ աշխատանք կատարած կլինի Անդրկովկասի այլ մասերում ևս։ Այս հավանական յենթադրությունը հաստատող փաստեր, սակայն, ղեռուս հայտարերված չեն։

1876 թվականին Անդրկովկասում ստեղծված նարոգնիկական կազմակերպությունը, վորքան այդ կարելի յե դասել հրապարա-

կում յեղած փաստաթղթերից, հիմնականում յեղել և նույն կազմակերպութեանը, ինչ վոր իր ժամանակի բուսական նարողնիկական կազմակերպութեաննրը: Անդրկովկասի նարողնիկական այդ կազմակերպութեանն իր գործունեյութեան բովանդակութեան, նպատակադրման, պրոպագանդայի նյութ դարձող իղեաների, աշխատանքի մեթոդների, անգամ սոցիալական կազմի և այլ տեսակետներից հիմնականում չի տարբերվել բուսական նարողնիկական կազմակերպութեաննրից: Անդրկովկասի նարողնիկական կազմակերպութեանն իր վրա կրել և հատկապես Սոֆիա Բարդինայի նարողնիկական խմբակի ազդեցութեանը և պատկանել և այդ խմբակի ուղղութեանը: Անդրկովկասի նարողնիկական կազմակերպութեան գործունեյութեան :պեցիֆիկումի հիմնական մոմենտը յեղել և այն, վոր կազմակերպութեան աշխատանքը զբնայել և նաև ազգային ազատագրական պայքարը կազմակերպելու և այն համառուսական ընդհանուր հեղափոխական շարժմանը զուգակցելու և միավորելու ուղղութեամբ:

1875 թ. հիմնված անդրկովկասյան նարողնիկական կազմակերպութեանը, վոր պետք և համարվի առաջին նարողնիկական կազմակերպութեանն ամբողջ Անդրկովկասում, յերկար կյանք չունեցավ: Մոտավորապես մեկ տարի գոյութեան ունենալուց հետո նա հայտարարվեց ցարական ժանդարմերիայի կողմից և լիկվիդացիայի յենթարկվեց: 1876 թ. ոգոստոս ամսին ազնվական Յեզոր Իվանովիչ Իոսելյանին, վոր սկզբում մասնակցում էր նարողնիկական այդ կազմակերպութեան աշխատանքներին, իսկ հետագայում դարձավ ցարական ժանդարմերիայի գործակալն ու լրտեսը, նարողնիկական այդ կազմակերպութեան գոյութեան, աշխատանքների և անդամների մասին մանրամասն տեղեկութեաններ տվեց Քուլթայիի նահանգապետ Մալաֆեյեվիին: Լրտես Յեզոր Իոսելյանու տված ցուցմունքների հիման վրա 1876 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին բանտարկվեցին կազմակերպութեան գրեթե բոլոր անդամները: Միայն կազմակերպութեան հիմնադիրներից մեկը՝ Իսիզոր Կիկոձեն, խույս տալով, թաղանթեց թյուրքիայում: Կազմակերպութեան բանտարկված անդամներից մեծ մասն աքսոր ուղարկվեց: 1876 թվի հոկտեմբեր ամսին՝ մեկ տարի առաջ ստեղծված նարողնիկական կազմակերպութեանն այլևս գոյութեան չունեցր:

1879—1880 թ.թ. ԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԿ

1879—1880 թ. թ., ինչպես յերևում է բժիշկ Լորիս-Մելիքյանի, մեղ հասած, հուշերից, Թբիլիսիում գործել և նարողնիկական անլեզալ մի խմբակ, վորն ունեցել և նարողովոլյան ուղղութեան: Նարողովոլյան այդ կազմակերպութեանը ևս, ըստ Լորիս-Մելիքյանի հուշերի, ունեցել և ինտերնացիոնալ կազմ: Նրա մեջ ընդգրկված են յեղել ուսաներ, վորոնք կազմել են մեծամասնութեանը, վրացիներ, հայեր և այլն: Կազմակերպութեանը սերտ կապ և ունեցել Պետերբուրգի Նարողնայա-Վոլյայի Գործադիր Կոմիտեյի հետ: Անդրկովկասում 1879—1880 թ. թ. գործող նարողովոլյան այդ խմբակի մասին դժբախտաբար մենք գեղևս չունենք մանրամասն տեղեկութեաններ: Կազմակերպութեան վերաբերյալ ժանդարմական գործ գեղևս չի հայտարարված, ըստ յերևութիւն, չլինելու պատճառով: Նարողնիկական այդ կազմակերպութեան մասին մեր ձեռքի տակ ունենք առայժմ միայն այդ կազմակերպութեան անգամ՝ բժիշկ Լորիս-Մելիքյանի հուշերը, վոր ազգազրվել և Ամերիկայի Կալիֆորնիա նահանգում հրատարակված հայկական «Ասպարեզ» լրագրում: Մագոմեով ազնվական, իր գործունեյութեամբ սկզբում կարճ ժամանակով նարողնիկ, իսկ հետո՝ հայ ազգային ազատագրական շարժման ակտիվ գործիչ, բժիշկ Լորիս-Մելիքյանը (ցարական հայտնի գեներալ կոմս Լորիս-Մելիքովի յեղբոր տղան) 1920 թվին գրած իր հուշերի մեջ պատմում է հետևյալը.

«Յեբը 1872-ին Թիֆլիսի գիմնազիան մտա, այն ատեն մտավորական հեղափոխական շարժում մը ծայր տալ սկսած էր, վորուն առաջինն ըլլալով հայոց մեջ, յես միացա 1879-ին, հետո՝ Հակոբ Բոչարյանը: Իսկ մեր կազմակերպած քաղաքա-տնտեսական դասախոսութեաններուն յեռանդուն կհետևեյին Սիմոն Զավարյանը և ուրիշները: Կոմիտե մը կազմեցինք, վոր կապ հաստատեց Պետերբուրգի մեջ սո-

ցիալիստ հեղափոխական «Նարոդնայա-Վոլյա» կազմակերպութեան հետ: Ավելացնեմ, վոր մեր կազմը միջցեղային էր, վորու մեջ կային և՛ ռուսներ, և՛ վրացիներ, և՛ հայեր, սակայն զանազան ցեղերու, մանավանդ ռուսական մեծամասնութեան մեջ, հնարավորութեամբ չուէն շուտ մեղեւնադրադառնալու, լավագոյն համարեցինք ազգային ուղեգծով ընթանալ զրախան արդյունքի մը հասնելու համար և 1880-ին բաժանվեցանք այդ ընդհանուր շարժումէն՝ մտնելու համար ազգային գործունէութեան մեջ, վոր սկսած էր արդեն շարժիլ, նույնիսկ ստեղծված էր Գրիգոր Արծրունիի շուրջը ազատական, և Սպ. Սպանդարյանի շուրջը՝ պահպանողական կղերամիտ շարժում մը, վորոնք ազգային ազատագրութեան ընդհանուր նպատակին կաշխատեցին: Այս վոգեվորութեան մեջ, յես՝ Գալուստ Տեր-Մկրտչյանի, Տեր-Գրիգորյանի հետ Յեկրոպա ուսանելու համար մեկնող առանձին խմբի մեջ կմտնեմ այն մտազրութեամբ, ուր զինվորական կրթութեամբ մը ստանալի վերջը դառնամ հայրենիք իբր մարդված զինվոր այդ շարժմանը ծառայելու: Սակայն Ֆրանսական Սեն-Սիրի վարժարանը մերժելով ոտարականներ ընդունել, ստիպված յեղա բժշկութեան հետեւելու: Սերտորեն կապվեցա ռուս հեղափոխականներու հետ, վորոնցմէ հիշեմ նշանավոր փախստական Լավրովը¹:

Իժիլ Լորիս-Մելիքյանի հուշերում հիշված Հակոբ Բոչարյանը, Սիմեոն Զավարյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը և Տեր-Գրիգորյանը, իսկապես, 1870—80 թ. թ. հայ նարոդնիկական ինտելիգենցիայի ներկայացուցիչներից էին: Հակոբ Բոչարյանը, որինակ, դեռևս 1875 թ. «Մշակ»-ում տպագրել է մի շարք հոդվածներ, վորոնք իրենց վրա կրում են նարոդնիկական իդեաների ազդեցութեանը: Այդ տեսակետից բնորոշ է նրա «Հացի խնդիր» խորագիր կրող հոդվածը, վոր գետեղված է «Մշակ»-ի 1875 թ. № 31-ում: Սիմեոն Զավարյանը և Գալուստ Տեր-Մկրտչյանը 1870—80 թ. թ. նույնպես տարված էին նարոդնիկական գաղափարներով: Տեր-Գրիգորյանը 1880-ական թվականներին հայտնի նարոդովուց էր և անմիջական, անձնական կապեր ուներ Նա-

րոդնայա-Վոլյայի Գործադիր կոմիտեյի անդամ Աննա Կորբայի և մյուսների հետ: Նա 1881—82 թ. թ. դարձավ Թբիլիսիում կազմակերպված նարոդովոլյան կազմակերպութեան զինվորական խմբակի ղեկավարներից մեկը:

Թե Անդրկովկասի նարոդովոլյան 1879—1880 թ. թ. այդ կազմակերպութեանն ինչ գործունէութեան է ծավալել և կոնկրետ ինչ է արել, այդ դեռևս մեզ հայտնի չէ: Վերը հիշատակված հուշերում այդ մասին չի խոսվում: Բնորոշ է սակայն, վոր նարոդովոլյան այդ կազմակերպութեան մեջ յեղած հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչները շուտով հեռանում են այդ կազմակերպութեանից և դառնում բացառապես «հայկական հարցի», հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներ:

Թե վորքան է գոյութեան ունեցել այդ կազմակերպութեանը, հաստատապես հայտնի չէ: Պետք է յենթադրել, սակայն, վոր Թբիլիսիի նարոդովոլյան այդ կազմակերպութեանը կազմակերպվել է 1879 թ. վերջերին և քայքայվել կամ ինքնալիկվողացիայի յե յենթարկվել 1880 թ. ընթացքում: Համենայն դեպս մի բան պարզ է, վոր այդ կազմակերպութեանը, վորը, ինչպես ասացինք, ուներ նարոդովոլյան ուղղութեան, 1879 թ. աշնանից շուտ չէր կարող կազմակերպված լինել, վորովհետև, ինչպես հայտնի յե, «Զեմլյա ի Վոլյա»-յի քայքայումը և «Նարոդնայա-Վոլյա»-յի կազմակերպումը կատարվել է 1879 թ. աշնանը: Քայքայվել է այդ կազմակերպութեանը, ըստ յերևութիւնի, 1880 թվականին կամ 1881 թ. սկզբներին, վորովհետև 1881 թ. աշնանն արդեն Թբիլիսիում կազմակերպվում է նարոդովոլյան մի նոր՝ զինվորական կազմակերպութեան: Պետք է յենթադրել, վոր 1879 թ. հիմնված նարոդնիկական կազմակերպութեան քայքայումից հետո նրա անդամներից շատերը մտնում են 1881 թ. վերջերին Թբիլիսիում կազմակերպված նարոդովոլյան այդ նոր՝ զինվորական խմբակի մեջ:

¹ Տես «Ասպարեզ», 1920 թ., № 626:

1881—1882 թ. թ. ՆԱՐՈՒՈՎՈՒՄՆԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ Խ Մ Բ Ա Կ Ը

Անդրկովկասում, ժամանակագրական կարգով, նարոզնիկական յերրորդ խմբակը կազմակերպվեց 1881 թվին: Այդ խմբակը, վոր կոչվում էր Նարոզովոյան զինվորական խմբակ, կազմակերպվեց հետևյալ պարագաներում:

Նարոզնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեն, կոմիտեյի ակա-նավոր անդամներ Փելլյարովի և Կոլոզկեվիչի առաջարկներով, 1880 թ. վորոշում ընդունեց կազմակերպել նարոզովոյան զինվորական խմբակներ բանակում: Այդ վորոշումը կյանքում իրագործելու նպատակով Պետերբուրգում ստեղծվեց «Զինվորական Կենտրոնական (գլխավոր) խմբակ», վորի կազմի մեջ մտան Փելլյարովը, Կոլոզկեվիչը, Սուխանովը, Շտրոմբերգը և Ռոզաշևը¹: Խմբակը 1880 թվի աշնանից սկսեց իր առաջին քայլերն անել բանակում առանձին նարոզովոյան խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Զինվորական կենտրոնի ձեռնարկած աշխատանքի շնորհիվ, 1880 թ. վերջերին արդեն նարոզովոյան զինվորական խմբակներ գործում էին Կրոնշտադաում և Պետերբուրգում: 1881 թ. մարտին ստացած հարվածից հետո ել, սակայն, Նարոզնայա Վոլյան շարունակեց իր աշխատանքները զինվորական խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Իրենց կազմով փոխված և թուլացած Գործադիր Կոմիտեն ու Կենտրոնական Զինվորական Խմբակը մարտի մեկից հետո ել շարունակեցին նոր փորձեր կատարել զինվորական շրջանների հետ կապվելու համար: 1881 թ. դարնանը Նարոզնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեյի և Զինվորական Կենտրոնական Խմբակի առաջարկներով մի շարք ակաճավոր նարոզովոլեցներ ծայրամասեր մեկնեցին՝ այնտեղ զինվորական խմբակներ կազմակերպե-

¹ Вера Фигнер, «Запечатленный труд», том 1, 1933 г., 62 183:

լու նպատակով: Այդ նոր նախաձեռնության շնորհիվ զինվորական խմբակներ կազմակերպվեցին Նովոորոգում, Մոսկվայում, Ուրյուում, Կիևում, Ուկրաինայում, Նիկոլայևում, Կովկասում, Մինսկում, Վիլնոյում և այլուր, վորոնց մեջ ընդգրկված էին մի քանի հարյուր անդամներ¹:

Զինվորական խմբակներ կազմակերպելու նպատակով ծայրամասեր գնացող նարոզովոլեցներից էր նաև Գործադիր Կոմիտեյի անդամ, ակաճավոր նարոզովոլեց Աննա Կորբան: Գործադիր Կոմիտեյի վորոշման համաձայն նա պիտի Կովկաս գնար՝ այնտեղ զինվորական խմբակ կազմակերպելու նպատակով: Նարոզնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեյի այդ վորոշումը սակավացի էր յենթարկելու նպատակով 1881 թ. ամառը Թբիլիսի ժամանեց Աննա Կորբան Վարվառա Ստեպանովնա կեղծ անվան տակ: Թբիլիսիում յեղած ամբողջ ժամանակ Աննա Կորբան կոնսպիրատիվ նպատակներով հենց այդ անվամբ ել ֆնաց: Այդ է պատճառը, վոր վոստիկանական գործում նա հիշատակվում է վորպես Վարվառա Ստեպանովնա:

Ժամանելով Թբիլիսի և ոգտագործելով կովկասյան ու ուսսական հեղափոխական ինտելիգենցիայի կապերը՝ Կորբան, վորպես Նարոզնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեյի ներկայացուցիչ, սկզբում կապվեց անցյալում նարոզնիկական խմբակների մեջ յեղած տեղական ինտելիգենցիայի (Կիպիանի, Զրելայել և այլն) հետ և ապա սրանց միջոցով ել՝ Թբիլիսիում գտնվող Մինգրելական գնդի հեղափոխականորեն արամադրված սպաների, յենթասպաների հետ: Հավաքելով այդ կազմերին իր շուրջը՝ Կորբան կազմակերպեց մի քանի (ըստ վոստիկանական գործի՝ յերեք) գաղտնի ժողովներ, վորտեղ և քննության առնվեցին նարոզովոլեցյան զինվորական խմբակ կազմակերպելու և խմբակի ծրագրի հարցերը²: Նախա-

¹ «Былое», 1907 г. № 4, 62 127:

² Աննա Կորբան Թբիլիսի ուղևորվելով իր հետ վերցրել էր Նարոզնայա Վոլյայի մի շարք հրատարակություններ, վորոնց թվում և «Народная Воля» թերթի № 3-ը, վորի մեջ ապագրված էր նարոզովոլեցյան զինվորական խմբակների ծրագիրը: Այդ ծրագիրն էր հենց, վոր քննության յենթարկվեց Կորբանի կողմից 1881 թվին ամառը Թբիլիսիում հրավիրված ժողովներում: Ինչպես յերևում է արևիվային նյութերից, Կորբան Թբիլիսիում բավական հաջող կերպով տարածում է «Народная Воля» թերթի համարները և նարոզնիկական մի շարք այլ անլեզու հրատարակություններ:

պատրաստական այդ ժողովներից հետո, 1881 թ. աշնանը (սեպտեմբերին) Աննա Կորբան կարողացավ հիմնադրել նարոդովոլյան զինվորական խմբակ Անդրկովկասում¹: Խմբակի կազմակերպման գործին, ինչպես այդ յերևում է խմբակի մասին կազմված վստուկանական գործից, առանձնապես ակտիվ կերպով մասնակցել են Կրպիանին, Չրելայեվը և 16-րդ զրենադերական Մինգրելական զնդի սպա Անտոնովը, Ալիխանյանը և Լիպոմանը:

Անդրկովկասյան նարոդովոլյան այդ զինվորական խմբակի մեջ ընդգրկված էին, ըստ ցարական կառավարութայն արդարադատութայն մինիստրութայն զեպարտամենտի քննչական գործի տվյալների, 28 հոգի: Պետերբուրգի դատական պալատի դատախազի տեղակալ Դորբոժինսկին խմբակի մասին կազմած իր մեղադրական յեզրակացութայն մեջ վորպես այդ խմբակի անդամներ թվում է հետևյալ անձնավորություններին.— ազնվականներ՝ Վլադիմիր Միխայլովիչ Յակովլևիչ, Պավել Միխայլովիչ Յակովլևիչ, Նադեժդա Սեմյոնովնա Յակովլևային, Շիո Եղիմեբովիչ Դավիդովին, Իլյա Դիմիտրովիչ Մաչավադիանուն, Ալեքսանդր Թեյմուրազովիչ Նանիաշվիլուն, Միխայիլ Կայզարովիչ Կրպիանուն, Մարիա Ալեքսանդրովնա Շերովաշիձեյին, Մինգրելական զնդի սպաներ՝ Ֆեոդոր Պետրովիչ Անիսիմովին, Ալեքսանդր

¹ 1881 թվի աշնանը Թրելիսիում հիմնադրված նարոդովոլյան զինվորական այդ խմբակի մասին ժանդարմական գործեր կան՝ 1. Վրաստանի Հեղափոխության թանգարանի արխիվում (տես Архив Музея Революции в Грузии, фонд № 36, дело № 34) և 2. Արխիվային Կենտրոնական Վարչութայն Լենինգրադի բաժանմունքի արխիվում (տես ЛОЦАУ, дело департамента Министерства Юстиции Второго Уголовного Отделения, о 28-ми лицах, обвиняемых в принадлежности к революционному кружку, образовавшемуся в г. Тифлисе 1883 г., дело № 11312.

Խմբակի մասին կազմված ժանդարմական գործից մեկ փոքր քաղվածք հրատարակվել է 1906 թվին (տես «Былое», 1906 г., август, էջ 163—163) և մի քանի փաստաթղթեր էլ 1930 թվին Ս. Մինգրովայի կողմից (տես «История класс. борьбы в Закавказье», кн. I, приложение II, էջ 67—80): Խմբակի մասին կազմված ժանդարմական գործը մինչև որս էլ ամբողջովին հրապարակված չէ: Խմբակի մասին կան նաև հիշողություններ, ինչպես, որինակ՝ Աննա Կորբայի, Աշեմբերների, Սերբերյակովի և ուրիշների հուշերը: Խմբակի մասին ապագրվել է նաև մեկ հոդված (տես Վ. Ի. Սվետլովայի «Провал военного кружка в Тифлисе» վերնագրով հոդվածը «Каторга и ссылка» հանդիսում):

Պավլովիչ Անտոնովին, Իոսիֆ Ֆելիցիանովիչ Լիպոմանին, Արչիլ Իվանովիչ Ցիցիանովին, Նիկոլայ Ալեքսանդրովիչ Ալիխանյանին, Ալեքսանդր Գրիգորեվիչ Մակուխինին, Վլադիմիր Լյուդվիգովիչ Դերժանովսկուն, Լեվան Ալեքսանդրովիչ Վաչնաձեյին, Յակով Յեպիֆանովիչ Միտնիկին, հրետանային սպա Սերգեյ Նիկիտին Շեպելյովին, չինոֆիլի տղա Վիկտոր Սիլվեստրովիչ Մելենշուկին, ազրոնոմ Ալեքսանդր Յասիլիչ Ելյոզովին, սարկավագի տղա Ստեփան Ֆեոդորովիչ Չրելայեվին, գյուղացիներ՝ Ալեքսեյ Լավրենայեվիչ Կուզմինին, Վարվառա Լավրենայեվնա Կուզմինային, քահանայի տղա Ապոլոն Իրենեվիչ Նեմոլովսկուն, Նարոդնայա Վոլյայի Գործադիր կոմիտեյի և Զինվորական Կենտրոնական խմբակի ներկայացուցիչներ՝ Աննա Կորբային, Սերգեյ Դեգայեվին, Գալինա Չերնյավսկայային և վաղարշապատցի քահանայի տղա Տեր-Գրիգորյանին:

Թրելիսիի նարոդովոլյան զինվորական խմբակի գործունյա անդամները, ինչպես յերևում է արխիվային նյութերից, յեղել են Անտոնովը, Մելենշուկը, Տեր-Գրիգորյանը, Շեպելյովը, Լիպոմանը, Ցիցիանովը, Ալիխանյանը և Նեմոլովսկին: Հետաքրքիր է, վոր զինվորական խմբակի անդամներից մի քանիսը, ինչպես, որինակ, Միխայիլ Կրպիանին, Ստեփան Չրելայեվը և Ալեքսանդր Նանիաշվիլին, 1875—1876 թ. թ. գոյություն ունեցող նարոդնիկական խմբակի անդամներից էին:

Խմբակը, չնայած կոչվում էր զինվորական, բայց ընդգրկում էր, ինչպես յերևում է խմբակի անդամների ընդհանուր ցանկից, վոր բերված է վերը, նաև վոչ զինվորական տարրեր: Հետաքրքիր է, վոր Թրելիսիում Աննա Կորբայի ջանքերով կազմակերպված նարոդովոլյան այդ զինվորական խմբակին մասնակցում էին նաև ուրիշ քաղաքներից: Խմբակի ալտիվ անդամներից մեկն էր, որինակ, Ալեքսանդրովի (այժմ Լենինականի) բերդապահ զորքի հրանոթային սպա Սերգեյ Նիկիտին Շեպելյովը, վոր խմբակի աշխատանքներին մասնակցում էր Կավիլին կեղծ ազգանունով: Արխիվային նյութերից պարզվում է, վոր Շեպելյովը նարոդնիկական իդեանների ալտիվ պրոպագանդիստ և հեղափոխական պայքարի վոգեվորված կոզմակիցներից մեկն էր: Պետերբուրգի դատական պալատի դատախազի տեղապահ Դորբոժինսկու մեղադրական յեզրակացութայն մեջ ասված է, վոր նա յերկու անգամ

մասնակցել և Թբիլիսիում հրավիրված գաղտնի ժողովներին և խոսել և «հեղափոխական վոգով, ներկա յեղողներին հրավիրել և մասնակցել ընդհանուր ապստամբութեանը, յեթե այդ կատարվի հեղափոխական կուսակցութեան նախաձեռնութեամբ»¹: Հարց և ծագում, թե Ալեքսանդրոպոլում պաշտոնավարող սպա Շեպելյովն արդյո՞ք նարոզնիկական իդեաների պրոպագանդա կամ նարոզնիկական խմբակ կազմակերպելու փորձեր չի արել Ալեքսանդրոպոլում: Այդ հարցին առայժմ պատասխանել հնարավոր չէ, համապատասխան նյութեր չլինելու պատճառով²:

Թբիլիսիում մի քանի ամիս մնալուց և նարոզովոլյան զինվորական խմբակը ձևավորելուց հետո Աննա Կորբան նույն թվականի աշնանը (1881 թ. նոյեմբերին) վերադարձավ Պետերբուրգ, վորտեղ և 1882 թ. հունիսին բանտարկվեց և, դատվելով 17-ի պրոցեսով, 20 տարվա տաժանակիր աշխատանքի դատապարտվեց: Հեռանալով Թբիլիսից՝ Կորբան իր հիմնադրած խմբակի

¹ См. ЛОЦАУ, Дело департамента министерства юстиции Второго Уголовного отделения, О 28-ми лицах, обвиняемых в принадлежности к революционному кружку, образовавшемуся в г. Тифлисе, 1883 г., дело № 11312:

² Այս կազմակցութեամբ ավելորդ չէ հիշատակել այն հանգամանքը, վոր դեռևս 1879 թվին Յերևանի նահանգական ժանդարմական վարչութեանը հակառակվարական, անլեզու գրականութեան հայտարարելու նպատակով խուզարկութեան և հետաքննութեան և յենթարկել Յերևանի տեղական կազմակերպության կից սպայական գրադարանը «նորին կայսերական մեծութեան սեփական զիվանատան յերբորդ բաժանմունքին» ուղղված 1879 թվի ոգոստոսի 7-ի թվակիր իր գրութեան մեջ Յերևանի նահանգի ժանդարմական վարչութեան պետ զնդապետ Փեդրոսովը գրում է, թե խուզարկութեան ժամանակ հայտարարվել են հետևյալ արգելված գրքերը.

1. Ն. Ֆերովսկու «Բանվոր դասակարգի գրութեանը Ռուսաստանում» (հրատարակութեանը Պետերբուրգում, 1869 թ.).

2. Դ. Ի. Պետրովի յերկերը, 4-րդ հատոր (հրատարակութեանը Պետերբուրգում, 1867 թ.).

3. Կ. Ֆ. Նեյմանի «Ամերիկայի Միացյալ Նահանգներին պատմութեանը» (հրատ. Պետերբուրգի, 1866 թ.).

4. Ֆերդինանդ Լասալի յերկերը յերկու հատորով (հրատարակութեանը Պետերբուրգում, 1870 թ.).

5. «Отечественные записки» պարբերականի 1874 թ. № 5-ը, (Տես Архив Революции в СССР, III отделение, 1-я экспедиция, 1879 г., дело № 35):

ղեկավար և իրեն փոխանորդ էր նշանակում խմբակի ակտիվ անդամ Սմբատ Տեր-Գրիգորյանին, վորին և հանձնարարում էր իր հետ կապ պահպանել ու գրականութեան մասակարարել խմբակի անդամներին:

«1881 թ. աշնանը Թիֆլիսից մեկնելով, — ասված է վոստիկանական գործում, — Կորբան զինվորականների խմբակը հանձնարարեց տեղացի Գրիգորյանցին, վորպես մի անձնավորութեան, վորը պետք է իր մեկնումից հետո մատակարարեր սպաներին արգելված հրատարակութեաններ և պահպաներ կապ նրանց (սֆիցերների. — Մ. Ն.) և նրա (Կորբայի. — Մ. Ն.) միջև, վորը և իրագործեց, ընդ վորում, սպաներից հավաքեց հարյուր սուբլի՝ գաղտնի տպարան կազմակերպելու համար»¹:

Այս նույն հարցի մասին ավելի մանրամասն տեղեկութեաններ տալիս է Պետերբուրգի դատական պալատի դատախազի տեղակալ Գորբոմիսկին՝ նարոզովոլյան զինվորական այս խմբակի մասին կազմած մեղադրական իր յեղրակացութեան մեջ:

«1881 թ. աշնանը, — գրում է դատախազ Գորբոմիսկին — Վարվառա Ստեպանովնան (Աննա Կորբան. — Մ. Ն.) վորոշեց մեկնել Թիֆլիսից և մեկնելու նախորդելին մի անգամ յերեկոյան Ալեքսանդրյան այգում Անտոնովին, ինչպես նաև Յիցիանովին, Ալիխանյանին և Լիպտմանին ծանոթացրեց մի յերիտասարդի հետ, վորն իրեն անվանեց Գրիգորով: Նա պետք է փոխարիներ Վարվառա Ստեպանովնային՝ խմբակի անդամներին արգելված գրքեր մատակարարելու գործում և ընդհանրապես պետք է կապ պահպաներ խմբակի և իրեն՝ Վարվառա Ստեպանովնայի միջև: Գրիգորովը, վոր ինչպես հետո պարզվեց, տեղացի յե Նրա իսկական ազգանունն է Գրիգորյանց: Անտոնովը և նրա մյուս ընկերները հետագայում յեղել են Գրիգորյանի տանը, ընդ վորում խոսակցութեան և տեղի ունեցել արգելված հրատարակութեանների մասին, վորից հետո նրանք մի քանի անգամ ևս տեսակցութեան են ունեցել Գրիգորյանի հետ և այդ հանդիպումներից մեկի ժամանակ նրանք

¹ «Былое», 1906 г. № 8, к 2 162:

Գրիգորյանի խնդրանքով ավել են նրան հարյուր ուսուցիչ, ինչ վոր շշատ կարևոր գործի համար», վորի ելույթյունը, սակայն, Գրիգորյանը չի ասել: Այնուհետև նրանք (այսինքն՝ Անտոնովը, Ցիցիանովը, Ալիխանյանը, Լիպովանը.—Մ. Ն.) Գրիգորյանին այլևս չեն տեսել և, հետաքրքրվելով իրենց տված փողի մասին, մի անգամ գնացել են Շերվաշիձեյի բնակարանը և նրանից (Շերվաշիձեյից.—Մ. Ն.) խմացել, վոր փողը ծախսվել է գաղտնի տպարանի համար»¹:

Նարոզնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեն և Զինվորական Կենտրոնական Խմբակը Աննա Կորբայի միջոցով հետևում էլին թրխիխիում կազմակերպված զինվորական խմբակի աշխատանքներին և անհրաժեշտ ցուցումներ էլին տալիս²: Թրխիխիի այդ խմբակը զեկավարելու, նրա աշխատանքներն աշխուժացնելու նպատակով Նարոզնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեյի առաջարկով 1882 թ. գարնանն Անդրկովկաս յեկավ Նարոզնայա Վոլյայի զինվորական կենտրոնի անդամ Սերգեյ Դեգայեվը, վորը հետագայում, ինչպես հայտնի յե, դավաճանեց և ժամադարմական գործակալ դարձավ: 1882 թ. մայիս ամսին Դեգայեվը Թրխիխի ժամանեց Պետրով կեղծ անունով: Թրխիխիի խմբակի անդամ Մարիա Շերվաշիձեյի միջոցով նա ծանոթացել է խմբակի մյուս անդամներին հետ: Դեգայեվը խմբակի անդամների մի քանի ժողովներ է

¹ ЛОЦАУ, „Дело департамента юстиции Второго уголовного отделения“, дело № 11312.

² Վասիկանական գործի տվյալներից յերևում է, վոր Շլիսելբուրգյան ամբողջում բանտարկված հայտնի նարոզովուց Ս. Միխայլովին Կորբան, Կովկասում գտնված ժամանակ, Թրխիխիից դադանի նամակ է ուղարկում, ուր խոսելով 1881 թվի մարտի մեկի տեոորիստական ակաի մասին՝ հայտնում է, թե հեղափոխական շարժումներն որեցոր ծավալվում են, թե դեռևս ծեղունիներ կան, վորոնք իրենց հետևից կտանեն յերիտասարդությունը, թե Ալեքսանդր III-ի դեմ տեոորիստական ակա և պատրաստվում և հույս է հայտնում, վոր Ալեքսանդր III-ի սպանությունը հանդիստ չի անցնի, այլ կուղեկցվի ժողովրդական ապստամբություններով: Նամակն ըստ յերևույթին չի հասել Միխայլովին և հայտարարվել է վոստիկանության կողմից նարոզովուց Տելալովի մոտ կատարված խուզարկության ժամանակ: Այս արժեքավոր նամակի տեքստը, վորտեղ ըստ յերևույթին կլինեն հետաքրքիր տեղեկություններ նաև Անդրկովկասի նարոզովույան խմբակի վերաբերյալ, մինչև որս չի հայտարարված:

գումարել, վորտեղ նա բացատրել է Նարոզնայա Վոլյայի ծրագիրը: Այդ ժողովներում, ինչպես ասված է վոստիկանական գործում, Դեգայեվը ինֆորմացիա յե տվել այն մասին, վոր Պետերբուրգում, բացի Գործադիր Կոմիտեյից, գոյություն ունի նաև զինվորական բարձրագույն խմբակ, և վոր Թրխիխիի խմբակը պետք է անմիջականորեն յենթարկվի զինվորական բարձրագույն խմբակին և ապա նրա միջոցով միայն կապ պահպանի Գործադիր Կոմիտեյի հետ: Դեգայեվը խմբակի անդամների ժողովներում հաջ է դրել հավաքել վիճակագրական տեղեկություններ Կովկասում յեղած գործամասերի վերաբերյալ, իմանալ զինապահեստների վայրերը, անդամների նոր ընդունելություն կատարել և այլն: Դեգայեվը այնուհետև Թրխիխիում՝ նարոզնիկական խմբակի անդամների մեջ «Նարոզնայա Վոլյայի Կարմիր Սաչի» ոգտին հանգանականություն է կատարել: Նրա առաջարկությամբ յոլորում է ընդունվել, վոր խմբակի բոլոր անդամներն իրենց վորոշում է ընդունվել, վոր խմբակի բոլոր անդամներն իրենց աշխատավարձի ամսական վորոշ տոկոսը հատկացնեն «Նարոզնայա Վոլյայի Կարմիր Սաչ»-ին: Ընդհանուր առմամբ Դեգայեվը Թրխիխիի նարոզովուրական զինվորական խմբակի աշխատանքների մեջ բավական աշխուժություն է մտցրել:

Դեգայեվը Անդրկովկասում մնաց մինչև 1882 թ. սեպտեմբեր ամիսը: Անդրկովկասում յեղած այդ ժամանակաշրջանում նա կարճ ժամանակով պաշտոնավարել է անդրկովկասյան յերկաթգծի շինարարության գլխավոր գրասենյակում: 1881 թ. հուլիս ամսին Դեգայեվը Բագու յե գնում և այնտեղից վերադառնում է Թրխիխի ոգոստոսի սկզբներին իր կնոջ հետ միասին: Թե ինչ նպատակով է նա Բագու գնացել և ինչ գործ է կատարել այնտեղ, այդ առայժմ հայտնի չե:

1882 թ. սեպտեմբերին Դեգայեվը Թրխիխիից Սարկով մեկնեց: Մի քանի ամիս անց՝ 1882 թ. վերջերին նա Ողեսայում բանտարկվեց և հենց այդ ժամանակվանից ել մոտեցավ վոստիկանապետ հայտնի Սուդեյկինին ու դարձավ նրա լրտեսը:

1882 թվին Թրխիխի յե յեկել նաև հայտնի նարոզովուց Գալինա Զերնյավսկայան՝ Յելենա Իվանովնա Դուբնսկայա և Յելենա Իվանովնա Դուբնիցկայա կեղծ անուններով: Թրխիխի գալու նրա հիմնական նպատակն էր տեղի զինվորական խմբակի անդամների միջոցով Անդրկովկասում մի շարք եքսպրոպրիացիոն

ակտեր հատարել: Չերնյավսկայան իր այդ նպատակներն իրագործելու նպատակով կապվեց Թբիլիսիի նարոդովոլյան խմբակի անդամների, հատկապես սպա Անտոնովի հետ: Չնայած Չերնյավսկայայի ձևափոխումը չեղանդուն աշխատանքներին, այնուամենայնիվ նրա նպատակադրումները չիրագործվեցին: Չերնյավսկայան առաջին անգամ Թբիլիսի յե ժամանել 1882 թ. մայիսին և մնացել է այնտեղ մոտավորապես յերեք ամիս: Նույն թվի սեպտեմբերին Չերնյավսկայան Թբիլիսիից ուղևորվել է Ռուսաստան, իսկ նոյեմբերի սկզբներին նորից Թբիլիսի յե վերադարձել: Վերջին անգամ նա Թբիլիսիից հեռանում է 1882 թվի դեկտեմբերին, յերբ արդեն հայտարարվել էր խմբակի դոյուլթյունը:

Թբիլիսիի նարոդովոլյան զինվորական խմբակը, ինչպես և այդ ժամանակ Ռուսաստանի մի շարք կենտրոններում գործող նարոդովոլյան գրեթե բոլոր զինվորական խմբակները, չկարողացավ ծավալել լայն, քիչ թե շատ աչքի ընկնող գործունեություն: 1881 թ. մարտին ցարական կառավարությունից ստացած հարվածից հետո նարոդնայա վոլյան այնուհետև չկարողացավ ընդհանրապես լայն գործունեություն ծավալել: 1881 թ. մարտի հարվածից հետո նարոդնայա վոլյայի գործունեությունը խիստ վայրենջք ապրեց: Նարոդնայա վոլյայի այդ շքանի գործունեությունը ընդհանուր թուլությունը արտահայտվեց նաև Թբիլիսիի զինվորական խմբակի աշխատանքներում:

Թբիլիսիի նարոդովոլյան զինվորական խմբակը, սակայն, չնայած թույլ, բայց այնուամենայնիվ վորոշ աշխատանք կատարեց: Խմբակն ամենից առաջ ստանում էր անլեզու զրահանություն և տարածում այն ինչպես խմբակի անդամների, այնպես էլ խմբակի վոշ անդամ, բայց համակրող տարրերի մեջ: Խմբակին մի քանի անգամ հաջողվել է թուուցիկներ տարածել զորամասերի և բնակչության մեջ: Խմբակն ունեցել է ժողովներ, վորտեղ քննվել են ինչպես ծրագրային, նույնպես և կազմակերպչական խնդիրներ: Խմբակը, ինչպես այդ յերևում է վոստիկանական գործից, 1882 թ. Ս. Գեդայիովի առաջարկով փորձեր է կատարում Անդրկովկասում գաղտնի տպարան հիմնելու համար: Գաղտնի տպարան հիմնելու նպատակով Թբիլիսիի խմբակի անդամները զրամ են հավաքում և անգամ ստանում են տպագրական սարքավորումներ, վորոնք պահվում են սկզբում Թբիլիսիում և ապա խմբակի

անդամ՝ անտառապետ Մելենչուկի մոտ: Ի դեպ սառած, Մելենչուկը նարոդովոլյան շարժման մեջ նշանավոր ֆիզուրա յե յեղել: Նա ապրել է Լոնդոնում, Շվեյցարիայում, գործել է Պետերբուրգում և այնուհետև վորպես ժողովրդական ուսուցիչ աշխատել է Կովկասում: Անտառապան է դարձել ըստ յերևույթին վորոշ նկատուունով: Խմբակը նախատեսել է տպարանը կազմակերպել Մելենչուկի տանը, Թբիլիսիի նահանգի Ազատու գյուղում: Մելենչուկի մոտ, ինչպես գրում է Պետերբուրգի դատական պալատի դատախազի տեղապան Գոբբոթինսկին իր մեղադրական յեղրակացություն մեջ, պահվել են գանազան քիմիական նյութեր: Քիմիական այդ նյութերը, ինչպես յերևում է, խմբակը հավաքել է նախատեսվող գաղտնի տպարանի կարիքների համար: Տպարանում աշխատելու համար առանձնացված է յեղել խմբակի անդամ Անիսիմովը, վորը հետագայում, սակայն, դավաճանեց, հայտնելով խմբակի գոյություն, անդամների և աշխատանքների մասին ցարական վոստիկանությունը: Չնայած ձեռք առած միջոցներին՝ նախատեսվող տպարանն այնուամենայնիվ չհաջողվեց բացել: Անիսիմովը խմբակի հանձնարարությունները զրազվում էր նաև գանազան կեղծ կնիքներ պատրաստելու գործով: Խմբակի անդամներից վոմանք փորձեր են կատարել առմեր պատրաստելու համար, սակայն այդ փորձերն անհաջող են անցել:

Թբիլիսիի նարոդնիկական խմբակը փորձեր է արել նաև էքսպրոպրիացիոն սկա կատարելու: 1882 թ. աշնանը վորոշվել է Գորու գանձարանից զրամ կողոպտել: Այդ վորոշումն ի կատար ածելու նպատակով, ինչպես վերն ասացինք, Անդրկովկաս է ժամանում Գալինա Չերնյավսկայան¹: Թբիլիսիի նարոդովոլյան խմբակի անդամների հետ միասին Չերնյավսկայան վորոշ աշխատանք է տանում: Նա, որինակ, Գորու գանձարանից զրամ կողոպտելու հնարավորությունները մոտիկից ուսումնասիրելու նպատակով խմբակի անդամ, նարոդովոլյեց Ա. Գ. Նեմոլովսկուն Ազարով Արիստարխ Կոստանտինովիչ կեղծ անունով տեղավորում է զրագրի պաշտոնով Գորու քաղաքային վարչության մեջ²:

¹ См. «Хроника социалистического движения в России», 1878—1887, официальный отчет, Москва, 1906 г. № 228:

² Био-библиографический словарь, том III, выпуск I, № 16:

Սակայն այդ ձեռնարկութիւնն եւ չի իրագործուիւմ: 1882 թ. ղեկտեմբերին ցարական վոստիկանութիւնը, հայտարարելով Թրի-լիսիի նարոզովոլյան խմբակի գոյութիւնը և եքսպրոպրիացիոն տկա կատարելու նրա այդ մտադրութիւնը, կանխեց այդ եքսպրոպրիացիան:

Չինվորական խմբակի անդամները, ինչպես այդ յերևում է ժանդարմական գործից, նամակագրութիւն են ունեցել արտասահմանում գտնվող ուսու նարոզնիկների հետ: Պարզվում է, որինակ, վոր Գալինա Չերնյավսկայան 1882 թվին Կոստանտին Ալի-խանյանի՝ խմբակի անդամ նիկոլայ Ալիխանյանի յեղբոր միջոցով գաղտնի նամակ է ստացել Փարիզից:

Թրիլիսիի նարոզովոլյան-զինվորական խմբակի գործունե-յութիւնը, մինչև այժմ հայտարարված նյութերից զատելով, սահմանափակվել է այսքանով: Խմբակի գործունեյութիւնն ուրիշ տկտեր մեզ հայտնի չեն:

Թրիլիսիի նարոզովոլյան խմբակը գոյութիւն ունեցավ մեկ տարուց ավելի—1881 թ. աշնանից մինչև 1883 թ. հունվար ամիսը: 1882 թ. նոյեմբերի 27-ին նարոզովոլյան խմբակի անդամ, 16-րդ զրենադերական Մինգրեյական գնդի սպա Ֆեոդոր Անիսիմովը ինքնակամ ներկայանում է Փոթի քաղաքի վոստիկանապետին և հայտնում խմբակի գոյութիւնն մասին: Փոթու վոստիկանապետն Անիսիմովին բանտարկում է: Բանտարկված Անիսիմովը ուղարկվում է սկզբում Գութայի վոստիկանապետի և ապա Թրիլիսիի վոստիկանութիւնն վարչութիւնն պետի արամադրութիւնն տակ: Նույն թվի ղեկտեմբերին Անիսիմովի տված մանրամասն տեղեկութիւններն հիման վրա կատարվում է նախնական քննութիւնն, իսկ 1883 թ. հունվարի սկզբներից սկսվում են բանտարկութիւնները, վոր շարունակվում են մինչև մարտ ամիսը: Բանտարկվում են խմբակի զրեթե բոլոր անդամները (խմբակի անդամների մեծ մասը բանտարկվեց 1883 թ. մարտին): Բանտարկութիւննից խույս տվին միայն Գալինա Չերնյավսկայան և Սմբատ Տեր-Գրիգորյանը: Վերջինս բանտարկութիւնների նախորեյին անցավ արտասահման (Փարիզ): Խմբակի անդամների մոտ վոստիկանութիւնն կողմից կատարված խուզարկութիւններն ժամանակ առանձնապես մեղադրական նյութեր չհայտարարեցին: Խմբակի ակտիվ անդամ Մելենչուկի մոտ միայն գտնվեց 193-ի

պրոցեսով դատված ու աքսորված նարոզնիկ կանանց խմբանկարը, իսկ Նեմիրովսկու մոտ՝ ատրճանակ, փամփուռներն հետ միասին, և մի ձեռագիր «Մ. Յ. Գ. Նարոզնայա Վոլյա կուսակցութիւնն» վերնագրով:

Պետերբուրգի դատական պալատի դատախազի տեղակալ Դորրոժինսկին խմբակի մասին կազմած իր մեղադրական յեղբակացութիւնն մեջ խմբակի անդամներին, ըստ նրանց հանցանքի ծանրութիւնն, բաժանում էր յերեք կատեգորիայի: Առաջին կատեգորիայի մեջ Դորրոժինսկին դասում էր Աննա Կորբային, Սերգեյ Դեգայիլին և Գալինա Չերնյավսկայային: Սրանք դիտվում էին վորպես խմբակի գլխավոր կազմակերպիչներ ու ղեկավարներ: Յերկրորդ կատեգորիային դասվում էին իշխանուհի Շերվաշիձեն, Չերկայիլը, Կիպիանին, Մելենչուկը, Շիո Դավիդովը, Ելյոզովը, Նանիաշվիլին, Պավել Յակիմովը, ամուսիններ Կուզմինները և Սմբատ Տեր-Գրիգորյանը: Յերկրորդ կատեգորիային դասված անձնավորութիւնները դիտվում էին վորպես խմբակի կազմակերպման գործի ակտիվ մասնակիցներ և ընդհանրապես վորպես խիստ վտանգավոր անձնավորութիւններ ցարական կառավարութիւնն համար: Յերրորդ կատեգորիային Դորրոժինսկին դասում էր խմբակի մնացած անդամներին, վորոնցից մի մասին համարում էր խմբակի ակտիվ, իսկ մյուս մասին՝ պասսիվ անդամներ:

Խմբակի բանտարկված անդամների մի մասը դատապարտվեց աքսորի՝ Սիբիր, մյուս մասը հանձնվեց վոստիկանութիւնն խիստ հսկողութիւնն: Մեղադրական տվյալների բացակայութիւնն պատճառով պատասխանատվութիւննից ազատվեցին միայն Նադեժդա Յակիմովան և Իլյա Մաչավարիանին: Պատասխանատվութիւննից ազատվեց նաև Անիսիմովը՝ վոստիկանութիւննը մատուցած իր ծառայութիւննների համար:

1883 թվի սկզբներին, այսպիսով, Թրիլիսիի նարոզովոլյան զինվորական խմբակն եւ լիկվիդացիայի յենթարկվեց:

Թրիլիսիի նարոզովոլյան-զինվորական 1881—1882 թ. թ. խմբակը, վորն ինչպես տեսանք, կազմվեց Նարոզնայա-Վոլյայի Գործադիր Կոմիտեյի կողմից և իր գոյութիւնն ամբողջ ժամանակաշրջանում գտնվում էր Գործադիր Կոմիտեյի անմիջական ղեկավարութիւնն տակ, յելնում էր նույն թեորետիկական ու տակ-

տիկական պրինցիպներէր, ինչ պրինցիպներէր վոր յելնում եյին Ռուսաստանում այդ ժամանակ գործող բոլոր նարողութւոյան-գին-վորական խմբակները և Նարողնայա-Վոլյայի Գործադիր Կոմիտան: Թրիլիսիի նարողութւոյան-գինվորական խմբակը չուներ յարահատուկ ծրագիր կամ սակարկա: Նրա գործունեյությունը գնաց նույն հունով, ինչ հունով վոր գնում եր Ռուսաստանում 1880-ական թվականներին գործող նարողութւոյան խմբակներէ գործունեյությունը:

1882—1883 թ. թ. ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՄԲԱԿ

1882 թվի վերջերին կամ 1883 թվի սկզբներին (ճիշտ դատան հայտնի չե) Թրիլիսիում հիմնադրվեց անկղալ նարողնիկական մի խմբակ, վորը բացառապէս հայ մտավորականներից եր բաղկացած: Այդ խմբակի մասին հուշեր և մի փոքր ուսումնասիրություն թողել ե խմբակի անգամ Գեվորգ Ղարաջյանը (Ս. Տ. Արկամեղ): Ղարաջյանի թողած այդ հուշերը և ուսումնասիրությունը¹ մինչև այժմ հանդիսանում են այդ խմբակի մասին յեղած հիմնական նյութերը: Ուրիշ նյութեր, համեմայն դեպս, մեզ մինչև որս հայտնի չեն:

Ղարաջյանի հուշերի համաձայն, այդ խմբակը կազմակերպվել ե Թրիլիսիում, 1882 թ. վերջերին կամ 1883 թ. սկզբներին: Խմբակի կազմի մեջ մտնում եյին հետևյալ անձնավորությունները. — Գարո Միրզոյան, Կոստանտին Մելիքյան, Քրիստափոր Միքայելյան, Ալեքսանդր Պարոսյան (Սանդալ), Խաչատուր Մալումյան և Գեվորգ Ղարաջյան: Բնորոշ ե, վոր խմբակի անդամներից մի քանիսը մինչև խմբակի կազմակերպումն ուսել են Ռուսաստանի կենտրոններում և մասնակցել են ուսական ուսանողական, նարողնիկական շարժումներին: Գարո Միրզոյանը, որինակ, 1870-ական թվականներին սովորել ե Կիևվի համալսարանում և մասնակցել ե Կիևվի համալսարանի ուսանողության 1878 թ. մարտ ամսի շարժումներին, վորի համար ել Կիևվի գե-

¹ Տես Գ. Ղարաջյան «Անցյալի հիշողություններից», Թիֆլիս, 1918 թիվ, «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակն Անդրկովկասում», Թիֆլիս, 1927 (այս բրոշյուրը հրատարակվել ե նաև ուսանողների լեզվով, «Զակկնի-գա»-յի կազմից, 1929 թվին, Թրիլիսիում), «Իմ կյանքի պատմությունը», անտիպ, հատոր 1-ին: Գ. Ղարաջյանի վերջին աշխատությունը, վոր բաղկացած ե յերկու հատորից, գտնվում ե ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Պատմության Ինստիտուտի արխիվում:

ներալ նահանգապետի հրամանով արտրվել է Կովկաս, իր ծննդավայր Թբիլիսի: Թբիլիսիում նրա վրա սահմանվել է վոստրիկանական վերահսկողություն¹: Կոստանտին Մելիքյանը սովորել է Պետերբուրգի անտառային ինստիտուտում և հարել է նարոդնայա Վոլյային, լինելով նրա համակիրներից մեկը²: Պարակի մյուս անդամները 1870-ական թվականներին Թբիլիսիում գոյություն ունեցող աշակերտական-ուսանողական խմբակների նախկին անդամներն էին: Պարակի գրեթե բոլոր անդամները ծանոթ էին Չերնիշևսկու, Գորբոլյուբովի, Միրտովի (Լավրովի) և Բակունինի հասարակական-քաղաքական գաղափարներին: Նրանք, գրեթե բոլորն էլ, կարգացել էին Չերնիշևսկու, Գորբոլյուբովի, Լավրովի աշխատությունները և գտնվում էին նարոդնիկական գաղափարախոսությունից ազդեցություն տակ³:

Թբիլիսիում 1882—1883 թ. թ. կազմակերպված այդ անլեզալ խմբակը, չնայած չի ունեցել նարոդնիկական շեշտված գործունեություն, բայց հիմնականում կանգնած էր նարոդնիկական «սոցիալիզմի» տեսակետների վրա: Նրա իդեալական-ծրագրային մակարդակը մտավորապես նույնն էր, ինչ վեր ուսուսական նարոդնիկական խմբակների իդեալական-ծրագրային մակարդակը: Պարակի ուղղություն մասին խմբակի անդամ Գ. Ղարաջյանը գրում է.

«Մի տեսակ գյուղացիական, ագրարային սոցիալիզմ, մի տեսակ արհեստավորական (մանր բուրժուական) սոցիալիզմ, լուծպես պրոլետարական սոցիալիզմ—անա թե խմբակի ուղղությունն ինչպիսի բնորոշում կարելի չե տալ մտավորապես»⁴:

Պարակը մշակված ծրագիր չի ունեցել, բայց նրա գործունեությունը և թողած գրական ժառանգությունը վկայում են խմբակի հեղափոխական-նարոդնիկական ուղղություն մասին:

¹ Ску «Деятели рев. движения», био-библиографический словарь, том II, выпуск 3, № 931.

² Ску Գ. Ղարաջյանի «Ժամկանքի պատմությունը», անտիպ, հատոր առաջին, էջ 97:

³ Ску Ե. Զ.—«Քրիստափոր Միքայելյան, 1917 թ. Բագու.— Գ. Ղարաջյան (Ս. Տ. Արկոմեդ)—«Մանդալը և նրա վեպերը», Թիֆլիս, 1930 թ.:

⁴ Գ. Ղարաջյան «Հայ. անդրանիկ հեղափոխական խմբակն Անդրբլովկասում», էջ 22.

Պարակը գտարյուն նարոդնիկական չէր, վորպիսին չէին նաև 1880 թվականներին գործող մի շարք նարոդնիկական խմբակներն ամբողջ Ռուսաստանում: Ընդհանրապես հայտնի չե, վոր 1880-ական թ. թ. «ինքնատիպ» նարոդնիկությունն աստիճանաբար եվոլյուցիա չէր կատարում ընդհանրապես դեպի քաղաքական ուղիվալիզմը: Սոսելով 1880-ական թվականների նարոդովոլեցիների մասին՝ Լենինն ասում էր, թե «Նարոդովոլեցիները պայքարը կառավարություն դեմ դառնում էր ուղիվալների պայքար քաղաքական ազատություն համար»¹: Յեվ պատահական չե, վոր 1880-ական թվականներին նարոդովոլեցի շատ խմբակներ, վորոնք գործում էին անգամ Ռուսաստանի կենտրոններում, նույնպես գտարյուն չէին: Այդ խմբակների մեջ մտնում էին գանազան հայացքների տեր մարդիկ: Այդ մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս Գ. Վ. Պլեխանովը:

«Նարոդովոլեցի կազմակերպություն մեջ,—գրում էր Պլեխանովը,—մտնում էին մարդիկ, վորոնք բավական ուժեղ տարածաչափություններ ունեյին... նրա (նարոդովոլեցիների կազմակերպություն.—Մ. Ն.) մեջ մտնում էին արևմտյան Յեվրոպայի ուղղություն ուղիվալներ, բայց կային նաև գտարյուն նարոդնիկներ և նույնպես մարդիկ, սրանք կարծեմ մեծամասնություն էին կազմում, վորոնք միաժամանակ հարում էին և՛ արևմտյան յեվրոպական ուղիվալիզմին, և՛ նարոդնիկությունը, վորի հետևանքով էլ նրանց հայացքները դառնում էին վերին աստիճանի խառնաշփոթ»²:

Հայացքների այդորինակ խառնաշփոթ դրույթուն կար նաև Թբիլիսիի հայ մտավորականներին՝ 1882—83 թ. թ. կազմակերպված խմբակում, վորի հետևանքով էլ, ինչպես վերը նշեցինք, խմբակը գտարյուն նարոդնիկական չէր, և խմբակի նարոդնիկական ուղղությունը հանդես էր գալիս խիստ շղախված քաղաքական ուղիվալիզմով:

Ինչպիսի և արտահայտվել խմբակի գործունեությունը: Պարակն ամենից առաջ փորձում էր նարոդնիկական գաղափարներ

¹ Ленин, собр. соч., том I, № 75:

² Предисловие Плеханова к «Истории Революцион. Движения в России», Туна, изд. 1922 г., № 44:

պրոպագանդա անելը Անլեզալ ժողովներ կազմակերպելով՝ խմբակի անդամներն աշխատում էյին նարոչնիկական խղճաները տարածել ինչպես քաղաքում՝ արհեստավորները և ուսանողության, նույնպես և գյուղում՝ գյուղացիության մեջ: Այս մասին խմբակի անդամ Ղարաջյանն իր հուշերում գրում է.

«Յմբի կենտրոնատեղն եր Թիֆլիս քաղաքը. նրա այս կամ այն անդամը գավառներ եր գնում վորեն պաշտոնով կամ գործով: Նրանք, վորոնք մ'նում էյին Թիֆլիսում կամ ապրում վորեն գավառական քաղաքում, աշխատում էյին կազմակերպել ուսանողական խմբեր և ժողովներ, կապ հաստատել արհեստավորների հետ և գործել նրանց շրջաններում, տեղական և տաճկահայ մշակներ խմբել իրենց շուրջը, գեթ վորքը չափով հազորդել նրանց իրենց գծախային կացության նկարագիրը, ներշնչել նրանց մեջ հույս, վոր ժամանակին նրանց զրույթյունը կրարեփոխվի. այս կամ այն հասարակական նյութի մասին պատահական դասախոսություններ կարդալ կամ զրույցներ կազմակերպել ինտելիգենտական, ուսանողական ավելի բազմամարդ ժողովներում և այլն և այլն: Գյուղում պաշտոնավարող կամ ժամանակավորապես այցելող ընկերը ջանում եր մոտենալ գյուղական աշխատավոր խավերին, մասնակցել գյուղական ժողովներին և հավաքույթներին, վարել ըստ ամենայնի ոգտակար կուլտուր-կրթական, հասարակական աշխատանք, պայքար մղել գյուղի կուլակներին և այլ «ցեցերի» դեմ և այդ պայքարի անհրաժեշտությունը հասկանալի դարձնել շահագործվողներին, տարածել գյուղական համայնքներում դերք, թերթ և այլն»¹:

Յմբակն ունեցել է նաև մի շարք հրատարակություններ: 1884 թվին, որինակ, խմբակը հեկտոգրաֆի վրա տպագրել է Միքայել Նալբանդյանի «Յերկրագործությունը վորպես ուղիղ ճանապարհ» հայտնի աշխատությունը, տարածել է այն ինչպես քաղաքում, նույնպես և գավառներում: Հետաքրքիր է, վոր «Յերկրագործություն»-ը հեկտոգրաֆի վրա տպագրելու գործին

¹ Գ. Ղարաջյանի «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակն Անդրկովկասում», էջ 24—25:

մասնակցել են նաև խմբակի վոչ անդամներ, Մոսկվայի Պետրովսկայա Հողագործական Ակադեմիայի ուսանող Ադամալյանը և Թրիխտի Արհեստավորաց Գորոցի աշակերտներ Միքայել Հովհաննիսյանը (Նար-Ռուբ) և Ալեքսանդր Ծատուրյանը (հետագայում բանաստեղծ): Հովհաննիսյանի և Ծատուրյանի մասնակցությունն արտահայտվել է նրանով, վոր նրանք հեկտոգրաֆի համար արտագրել են «Յերկրագործության» ամբողջ տեքստը: Միքայել Նալբանդյանի «Յերկրագործությունը վորպես ուղիղ ճանապարհ» գրքի վերահրատարակման և նրա տարածման մասին Ղարաջյանն իր անսխալ հուշերում գրում է.

«Գյուրոցների փակումից անմիջապես հետո, յես առիթ ունեցա գնալ Թիֆլիս ընկերներին հետ տեսնվելու: Նրանք արդեն բաց էյին թողել գյուրոցների փակման առիթով մի անլեզալ թուղիկ և միևնույն ժամանակ անլեզալ լույս ընծայել հեկտոգրաֆի վրա տպած Միք. Նալբանդյանի «Յերկրագործությունը վորպես ուղիղ ճանապարհ» վերնագրով արգելված գրքույկը: Յմբակի Թիֆլիսի ընկերներն իրենց ձեռքի տակ ունեյին այդ աշխատության Փարիզի 1862 թվակ. հրատարակության մի որինակը: Այդ անլեզալ հրատարակություններից յես մեծ քանակությամբ ստացա Քրիստ. Միքայելյանից և վերադարձա Գանձակ: «Յերկրագործություն» գրքույկի որինակները և թուղիկները մի մասն ուղարկեցի Բաղու Սմբատ Սարգիսբեկյանին, իսկ մյուս մասը տարածվեց Գանձակի շրջանում»¹:

1885 թվականին, հայկական գյուրոցների փակման կապակցությամբ, խմբակը հրատարակել և տարածել է նաև խիստ հակացարական բովանդակություն ունեցող մի թուղիկ: Թուղիկը, ինչպես այդ յերևում է վոստիկանական գործից, տարածվել է ինչպես Թրիխտիում, նույնպես և գավառներում: Թուղիկը հասել է անգամ արտասահմանում հրատարակվող «Народная Воля» պարբերականի խմբագրությանը, վորը և թերթի 1885 թ. հոկտեմբերի № 11—12-ում թարգմանաբար քաղվածքներ է տպել

¹ Գ. Ղարաջյանի «Եմ կյանքի պատմությունը», անտիպ, հատ. I, էջ 161, տես Գիտ. Ակադ. Հայկ. Ֆիլիալի Պատմության Ինստիտուտի արխիվը:

այդ կոչից: Այդ կոչի մասին իր ժամանակին հիշատակութիւնն արեց Քրանսերեն լեզվով հրատարակած իր «Քաղաքական և սոցիալական Ռուսաստանը» գրքում նաև Լեվ Տիխոմիրովը:

1885 թ. փետրվարին հրատարակված այդ թոռուցիկը, վոր «Հայ յեղրայրներ և հայ քույրեր» խորագիրն ունի, սկսվում է հետևյալ տողերով.

«Այսոր, ամենքիդ առաջ կատարվում է մի սարսափելի ավաղակութիւն, մի հանդուգն բաշխեցողութիւն, մի խայտառակ բռնարարութիւն՝ ուսաց միապետութիւնն իրեն հատուկ բռնակալութեամբ փակում է մեր դպրոցները:

Թեթևամիտ տղաները, դեպի ամեն սուրբ բան անտարբեր վերաբերվող բուրժուաները, մեր պճնասեր տիկիւններն ու ուրիորդները, վերջապես հոգով և մարմնով ապականված՝ իրեն ինտելիգենտ անվանող դասը, իհարկե, թեթև, շատ թեթև աչքով են նայում այդ անորեն կերպով կատարվող իրողութեան վրա: Բայց արդյոք հեշտ է տանել այդ հարվածը, մի՞թե պետք է անտարբեր նայինք մենք՝ հայերս՝ այդ անխիղճ անարդարութեան վրա, անա հարցը ինչն է՞»¹:

Այնուհետև խոսելով ազգային յեկեղեցու և ազգային դպրոցի կատարած մեծ դերի մասին հայ լեզվի և հայութեան՝ վորպես ազգութեան՝ պահպանելու գործում, թոռուցիկը շարունակում է.

«Բռնակալ Ալեքսանդր յերրորդը քարուքանդ է անում հայոց դպրոցը—մի ահագին պետութեան թագավորը պատերազմ է հայտնում մի փոքրիկ ազգութեան:

Բայց ինչո՞ւ յենք վարմանում:

Ռուսաց բռնակալների քաղաքականութիւնը Վաղուց հայտնի յե ամենքին—վանազան արտոնութիւններ տարով՝ իրեն հպատակեցնել փոքրիկ ազգութիւնները, նրանց հազար ու մի խոստումներ անելով, դաշնագիրներ գրելով, իսկ հպատակեցնելուց հետո աշխատել փոքր առ փոքր վոչնչաց-

¹ Թոռուցիկի տեսքստը տես ԼԿ(Բ)Կ Կենտ. Կոմիտեյին կից Կուսակցութեան Պատմութեան Ինստիտուտի արխիվում: Թոռուցիկի տեսքստը հրատարակվել է առաջին անգամ 1927 թվականին, Փ. Ղարաջանի «Հայ Անդրանիկ հեղափոխական խմբակն Անդրկովկասում» գրքույկում:

նել արված արտոնութիւնները, ձեռք նրանց բոլոր կենսական ուժերը և ապա դեն շարտել նրանց քամած լիմոնի պես:

Ինչ արեցին ուսաց բռնակալները վրացիների հետ, այն են անում նաև հայերիս հետ: Սկզբում խորամանկ խաբերայութեամբ մեր միջոցով՝ մեր Արարատյան քաջերի արյունով հաստատեցին իրենց պետութիւնն ամբողջ Անդրկովկասում, մեր արյան և վոսկերաց վրա հիմնեցին իրենց բռնակալութիւնը Ռուսաստանի մի անապահով սահմանի վրա և իրենց շտիկներով շրջապատեցին նաև մեզ, այնուհետև այդ շտիկները դարձրին և դեպի մեր կրծքերը...

Միբիլի յեղրայրներ և քույրեր, ի սեր ազգութեան և մեր ազգային յեկեղեցիով, լավ կշռեցեք այսոր կատարվող իրողութիւնը, լավ իմացեք, վոր դա մեզ, ուսասանայերիս համար մահու և կենաց խնդիր է:

Ինչ կարող ենք անել մենք, կպատասխանեք դուք, քանի վոր այսոր նույնիսկ հարյուր միլիոն ուսու ժողովուրդը տնքում է յուր բռնակալի լծի տակ:

Այո, հարյուր միլիոնից բաղկացած այդ ժողովուրդը նույնպիսի զոհ է իր բռնակալների ձեռքում, վորպիսին և մենք ենք, բայց մի մոռանաք, վոր այդ ժողովուրդն այսոր թե վաղը կարող է ազատվել այդ լծից և, իհարկե, այդ ազատութիւնը ձեռք բերելու համար նա գործում է, միջոցների յե դիմում, վերջապես այդ բազմաթիվ ժողովուրդը ձնչված է ավելի տնտեսական կողմից և նա պահպանելով յուր լեզուն, պահպանում է և յուր միութիւնը, յուր ամբողջութիւնը...

«Տաճիկ բռնակալը հափշտակում է մեր սեփականութիւնը, մենք աղաղակում, գոռում, բողբոռում էյինք անիրավութեան դեմ, բայց ուսու-բաշխեցողը քանդում է մեր սրբավայրերը—մեր դպրոցները, պատերազմ հայտնում մեր լեզվին և մենք գլուխներս խոնարհեցրած ախ ու վախ ենք քաշում միայն: Մեր լեզունները հանում են արմատից և մենք փոխանակ բուռնցք ցույց տալու մեր վիզերն են դնում ենք անամոթ դահճի կացնի տակ»¹:

¹ Տես նույն տեղ:

Սմբակի այս կոչը, ինչպես տեսնում ենք, առանձնապես նարոզնիկական վորեն իդեա չի քարոզում: Կոչն ամենից առաջ աչքի յե ընկնում իր հակացարական, ազատագրական գաղափարներով, իր քաղաքական ուղիկալիզմով: Նա հեղափոխական վորով գրված մի թուղցիկ է, վոր շեշտակի և խիստ խոսքերով դուրս է գալիս ցարիզմի դեմ և «բռունցք ցույց տալու» կոչ անում: Իր ժամանակի հայ իրականութեան մեջ այս նշանակալից յերևույթ էր: Միաժամանակ, սակայն, թուղցիկում վորոշ չափով հնչվում էյին ազգայնական և կղերական մշուշներից դեռևս վերջնականապես չազատագրված հայ դեմոկրատիզմի նոտաներ: Այսպես, որինակ, առանձին պաֆոտով ու վերամբարձութեամբ խոսվում է հայոց յեկեղեցու նշանակութեան, նրա անցյալ փառքի ու իշխանութեան մասին և այլն: Սակայն այդ նոտաները շատ թույլ են հնչվում, և կոչը հիմնականում ու ընդհանուր առմամբ մնում է վորպես իր ժամանակի հայկական ազգային ազատագրական շարժման, հայ դեմոկրատիզմի և քաղաքական ուղիկալիզմի դուկումենտներից մեկը: Իսկ քաղաքական ուղիկալիզմը, դեմոկրատիզմը, ինչպես նաև ազգային ազատագրական պայքարը, ոտար չեն նարոզնիկութեանը: Իրանք նարոզնիկութեան բաղկացուցիչ էլեմենտներից են: Յեվ զարմանալի չե, իհարկե, և վոչ էլ անսպասելի, յերբ նարոզնիկական խմբակը ազատագրական պայքարի, դեմոկրատիզմի և ուղիկալիզմի վորով այդպիսի կոչ էր հրատարակում:

1882—1883 թ. թ. Թրիլիսիում հայ մտավորականներից կազմակերպված նարոզնիկական խմբակը հակումն ուներ դեպի տեուորը: Ղարաջյանն իր հուշերի մեջ գրում է, վոր խմբակի համար տեուորը ընդհանրապես, և անարխիստական տեուորը մասնավորապես, ընդունելի միջոց էր համարվում: Ղարաջյանի ասելով՝ խմբակի անդամներից մի քանիսը տեուորիստական տրամադրութեուն են ունեցել, և հայկական դպրոցների փակման ժամանակ նրանցից մեկը (Գ. Ղարաջյանը) մտադրութեուն է ունեցել տեուորիստական ակտ կատարել ցարական սատրապներից մեկի դեմ: Այդ մտադրութեունը սակայն չի իրագործվում խմբակի թուլութեան և անհրաժեշտ վճռականութեան բացակայութեան պատճառով: Սմբակի տեուորիստական հակման մասին վկայում է, ի միջի այլոց, 1884—1885 թ. թ. հայկական դպրոցների փակման կապակ-

ցութեամբ հրատարակված թուղցիկը, վոր հիշված է վերը: Սմբակի հրատարակած այդ թուղցիկում, որինակ, կան հետևյալ տողերը.

«Յեթի այսոր մենք, հայերս անկարող ենք դիմադրել խաբեբա բռնակալներին, զոնե մենք կարող ենք մահի վճիռ կարգալ այդ բռնակալների ձեռքի տակ գործող այն սուոր սողուններին, վորոնք մեր լեզուն և նորա հեա՛նաև մեր ազգութեունը մահու յեն դատապարտել»¹:

Իժվար չի հասկանալ, վոր «մահվան վճիռ կարգալ» ասելով՝ թուղցիկի հեղինակը հանդիսացող խմբակը տեուորիստական ակտեր կադմակերպելն էր ակնարկում: Սակայն, չնայած դրան, խմբակը և վոչ մի լուրջ փորձ չարեց տեուորիստական ակտ կազմակերպելու ուղղութեամբ:

1882—1883 թ. թ. Թրիլիսիում հիմնադրված խմբակը գաղտնի կապեր էր հաստատել այլ քաղաքներում և գավառներում աշխատող խմբակին համակրող անձնավորութեունների հետ, վորոնց և խմբակը տալիս էր զանազան հանձնարարութեուններ: Սմբակի անդամները միաժամանակ կապեր էյին հաստատել Ռուսաստանից Կովկաս աքսորված ուսու նարոզնիկների հետ: Այդ կապերի մասին Գ. Ղարաջյանը գրում է.

«Սումբն ուներ այս կամ այն քաղաքում կամ գավառում կապեր զանազան վստահելի անձերի հետ, վորոնք կատարում էյին խմբի հանձնարարութեունները: Հարաբերութեունները խմբի անդամների մեջ և խմբից դուրս կանգնած մարդկանց հետ խիստ կոնսպիրատիվ ընույթ էյին կրում... Թիֆլիսում և այլուր յերևում էյին այդ ժամանակ մեկ-մեկ Ռուսաստանից աքսորված ուսու հեղափոխականներ, վորոնք վստիկանութեան հակողութեան տակ ապրում էյին մեր յերկրում ժամանակավորապես: Սմբակի այս կամ այն անդամ աշխատում էր կոնտակտի մեջ մտնել նրանց հետ: Նրանցից հնարավոր էր լինում յերբեմն անլեզալ (գլխավորապես—նարոզնիկական—հեղափոխական) գրվածքներ ստանալ»²:

¹ Տես նույն տեղը
² Գ. Ղարաջյան—«Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում», էջ 44:

Հայ ինտելիգենցիայից բաղկացած՝ Թբիլիսիի այդ նարոդ-նիկական խմբակի մասին, հետաքրքիր և, վոր մի քանի տող գրվեց «Народная Воля»-ի 1885 թ. № 11—12-ում: «Народная Воля»-ի այդ համարում խմբակի թուռցիկից թարգմանաբար վորոշ քաղվածքներ տպագրելու կապակցությամբ թերթը կարճ ինֆորմացիա յեր տալիս, վոր նորերս «կազմակերպվել և հայկական հեղափոխական խմբակ»:

1882—1883 թ. թ. Թբիլիսիում կազմակերպված նարոդնիկական այդ խմբակը լայն գործունեություն չձավալեց: Սաղաղ և վոչ սխտեմատիկ պրոպագանդայից ու մի քանի հրատարակութուններին զատ, խմբակն այլ պրակտիկ քիչ թե շատ լուրջ վոչ մի գործ չձեռնարկեց: 1881 թ. մարտի մեկին հաջորդող հիասթափությունը, կասկածանքները, այնուհետև հասարակական-քաղաքական նոր իրադրությունները, խմբակի անդամներին միջև յեղած տարաձայնությունները և այլն չեյին կարող իհարկե, բացասաբար չազդել խմբակի գործունեություն վրա: Սմբակն ընդհանուր առմամբ կարելի յե դասել իր ժամանակին գոյություն ունեցող նարոդնիկական բազմաթիվ, համեմատաբար վոչ գործունյա, այսպես կոչված «պասսիվ» խմբակների շարքը:

1882—83 թ. թ. Թբիլիսիում կազմակերպված հայ մտավորականների անլեզալ նարոդնիկական այդ խմբակը, սակայն, չլինելով գտարյուն նարոդնիկական, իր վրա կրում եր հայ ազգային-ազատագրական շարժման բավական ուժեղ ազդեցությունը: Տաճկահայ ազգային շարժումները, այսպես կոչված «հայկական հարցը», խմբակին զբաղեցնող կարևոր հարցերից մեկն եր: Սմբակի անդամ Ալեքսանդր Պետրոսյանը (Սանդալը), որինակ, 1883 թ. անցավ Տաճկահայաստան, բայց մի քանի ամիս այնտեղ վորպես ուսուցիչ աշխատելուց հետո, հիասթափված վերադարձավ Կովկաս: Սմբակը, սակայն, տաճկահայ ազգային շարժումների ուղղությամբ ևս վորևե պրակտիկ քայլ չձեռնարկեց: Նա տաճկահայ ազգային շարժումներին վերաբերող տեսական հարցերի քննություն սահմաններից զուրս չեկավ:

Սմբակի գոյությունը տևեց մինչև 1885 թ. վերջերը կամ 1886 թ. սկիզբները: 1885 թ. վերջերին կամ 1886 թ. սկզբներին (ճիշտ դատան դժվար և վորոշել) խմբակը քայքայվեց, ինքնալիկվիդացիայի յենթարկվեց: Սմբակի այսորինակ վախճանը

տրամաբանական եր: Նարոդնիկական շարժման 1880-ական թվականներին կրախի ազդեցություն տակ խմբակում առաջանում եյին հիասթափություն և տարաձայնություն: Սմբակի քայքայման, ինքնալիկվիդացիայի գործում առանձնապես խոշոր դեր խաղաց այն հանգամանքը, վոր 1880-ական թվականներին առանձնապես մեծ ծավալ ստացան հայ ազգային-ազատագրական շարժումները, շարժումներ, վորոնք դեպի իրենց եյին քաշում հայ հեղափոխական-դեմոկրատական ինտելիգենցիային: Սմբակի անդամների մի մասն արդեն 1885 թվից ձգտում եր դեպի հայկական ազգային-ազատագրական շարժումը, մյուս մասը՝ բուրժուական լիբերալիզմի դիրքերը: Հենց այդ նոր իրադրությունների, այդ հիասթափություն ու տարաձայնությունների շնորհիվ ել խմբակն ինքնալիկվիդացիայի յենթարկվեց: Սմբակի անդամներից մի քանիսը հետագայում դարձան հայկական ազգայնական կուսակցությունների ականավոր դեմքերը, մի քանիսն ել վերջնականապես կառչեցին բուրժուական լիբերալիզմին:

1881—1882 թ. թ. Թբիլիսիում հիմնված խմբակը նարոդնիկական վերջին խմբակն եր, վոր կազմակերպվեց Անդրկովկասում: 1882 թվից հետո Անդրկովկասում նարոդնիկական նոր խմբակներ այլևս չկազմակերպվեցին, չնայած այդ ուղղությամբ կատարվեցին մի քանի փորձեր:

1884—1885 թ. թ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ
ԽՄԲԱԿՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ

Զնայած Նարոզնայա Վոլյան մահացու հարվածներ ստացավ 1881—82 թ. թ. և այդ թվականներից ել իր վերջնական քայքայման ճանապարհը բռնեց, բայց այնուամենայնիվ Նարոզնայա Վոլյայի մի շարք ներկայացուցիչներ, նարոզովոլյան իլյուզիաներով վոզեվորված վորոշ տարրեր դեռևս 1884—85 թ. թ., անգամ զեռ ավելի ուշ, փորձեր եյին անում նարոզովոլյան նոր խմբակներ կազմակերպելու և հները վերականգնելու: Այդպիսի փորձեր, վորոնք գրեթե բոլորն էլ անխուսափելիորեն վերջանում եյին անհաջողութեամբ, կատարվեցին ինչպես Ռուսաստանի և Ուկրաինայի մի քանի կենտրոններում (Մոսկվայում, Պետերբուրգում, Կիեվում, Խարկովում, Ոդեսայում), այնպես էլ Անդրկովկասում:

Մեր ձեռքի տակ յեղած նյութերից պարզվում է, վոր 1884—1885 թ. թ. ուես նարոզովոլեցիները յերկու անհաջող փորձ են կատարել Անդրկովկասում նարոզովոլական նոր խմբակներ կազմակերպելու նպատակով: Այդորինակ առաջին փորձը, ինչպես յերևում է ՀԿ (բ) Կ Կենտրոնական Կոմիտեյին կից Կուսակցութեան Պատմութեան Ինստիտուտի արխիվում պահվող վոստիկանական գործից, կատարվել է 1884 թ. ամառը:

1884 թ. ամառը Բագու յե գալիս մի քանի անգամ բանտարկված և Միրիրի աքսորավայրից փախած նարոզնիկ Անդրեյ Վլասովը: Ըստ վոստիկանական գործի, Վլասովը Բագովում յեղած ժամանակ ապրում է Լոշչենիկովի տանը (կայարանի մոտ) կեղծ անցազրով: Վլասովը Բագովում վորոշ ժամանակ աշխատում է դարբնոցում և գաղտնի տեսակցութեաններ է ունենում ինչ-վոր մարդկանց հետ անլեզալ խմբակ կազմակերպելու նպատակով: Այնուհետև Վլասովն անլեզալ նարոզնիկական խմբակ կազմա-

կերպելու այդ նույն նպատակով Բագովից մեկնում է Յելիզավետոպոլի (այժմյան Կիրովաբադի) գավառի Նովո-Սարատովկա գյուղը՝ ցարական կառավարութեան կողմից այնտեղ աքսորված սեկտանտ Յակիմ Ռոմանովիչ Բոգատենիկովին տեսնելու համար: Վերջինիս չգտնելով գյուղում, Վլասովը յերկու որ մնում է Նովո-Սարատովկա գյուղում՝ Կառնեյ Բոգդանովի տանը և ապա վերադառնում է Բագու: Բագու վերադառնալիս՝ ճանապարհից հենց Վլասովը յերկու նամակ է գրում Յակիմ Բոգատենիկովին: Այդ նամակներից մեկը Բոգատենիկովն ստանում է Շամշադինի անտառապահ Մելիքյանի միջոցով: Յեղոպոսյան լեզվով գրած իր այդ նամակներում Վլասովն առաջարկում է Բոգատենիկովին գաղտնի խմբակ կազմակերպել: Վլասովի ջանքերը սակայն ապարդյուն են անցնում: Մի ինչ-վոր սպանութեան կապակցութեամբ Վլասովը շուտով բանտարկվում է: Զնայած հետագա քննութեաններից պարզվում է, վոր Վլասովը վորևե բանով մեղսակից չէ այդ սպանութեանը, բայց նրան, այնուամենայնիվ, չեն ազատում բանտից, վորովհետև նրան բանտարկելու ժամանակ կատարված խուզարկութեանը հայտարեբում է մի շարք նամակներ և թղթեր, վորոնցից յերևում է, վոր Վլասովն աքսորից փախած նարոզնիկ է և Բագու յե ժամանել նարոզնիկական գաղտնի խմբակ կազմակերպելու նպատակով: Վլասովի գործն այսպիսով քրեականից դառնում է քաղաքական և նրան պահում են բանտում վորպես հեղափոխականի՝ «քաղաքական հանցադործի» (վոստիկանական գործը լրիվ չլինելու պատճառով չի պարզվում, թե ինչ յեղավ Վլասովի վիճակը բանտարկութեանից հետո): Վլասովի հետ միասին բանտարկվեց նաև Յակիմ Բոգատենիկովը: Նարոզովոլեց Անդրեյ Վլասովի նարոզնիկական խմբակ ստեղծելու 1884 թ. փորձը, այսպիսով, անհաջող վերջացավ:

1884 թ. վերջերին և 1885 թ. սկզբներին մի նոր, ըստ յերևույթին վերջին, փորձ է արվում Թբիլիսիում նարոզովոլյան խմբակ կազմակերպելու համար: 1885 թ. Թբիլիսիում նարոզնիկական նոր խմբակ կազմակերպելու այդ փորձի մասին պատմում է 1882—1885 թ. թ. ուես նարոզովոլեցիների շարքերում, հատկապես հայտնի Գերման Լոպատինի հետ աշխատող նարոզովոլեց Բախն իր հուշերի մեջ¹: Բախն հուշերից պարզվում է, վոր Թբի-

¹ Տես «Былое», 1907 г., № 3, էջ 200:

լիսի այն ժամանակվա հեղափոխականորեն արամազրված մի շարք տարրեր նպատակ են ունեցել նարոզնիկական մի նոր կազմակերպութիւն ստեղծել: Ինչպես պատմում ե Բախն իր հուշերի մեջ, Թբիլիսիում աշխատող մի փաստաբան և նրա կիներ (Բախը նրանց անունները չի հայտնում) 1884 թվին դիմում են Ռոստովում և Մոսկվայում աշխատող նարոզովուեցներին, նրանցից համապատասխան ղեկավարութիւն և ոգնութիւն խնդրելու՝ Թբիլիսիում նարոզնիկական նոր խմբակ կազմակերպելու համար: Այդ դիմումի հետևանքով ել նարոզովուեց Բախը 1884 թ. ղեկեմբերի 10-ին Մոսկվայից ուղեւորվում ե Թբիլիսի՝ այնտեղ նարոզովուկական խմբակ կազմակերպելու նպատակով: Այդ նույն նպատակով Թբիլիսի յե ժամանում նաև նարոզովուեց Կրիլով-Վոսկրեսենսկին: Սակայն այս անգամ, չնայած մի քանի տեղացիների, ինչպես նաև Կրիլով-Վոսկրեսենսկու յեռանդուն ջանքերին, Թբիլիսիում նարոզնիկական նոր խմբակ կազմակերպելու գործը չի հաջողվում: Այն ընդհանուր հիասթափութիւնը, վոր կար նարոզովուեցների շարքերում, տիրում եր նաև Անդրկովկասի նարոզնիկների մեջ: Նարոզնիկութիւն վերջնական քայքայումն ակընհայտ եր դարձել: Նարոզնիկութիւն ակտիվ գործիչներից շատերը, վորոնց թիւում հենց ինքը՝ Բախն արդեն այլևս չեյին հավատում իրենց գործի հաջողութիւնը: Նշանավոր նարոզնիկներից շատերը վերջնականորեն համոզվելով նարոզնիկութիւն քայքայման, պարտութիւն և ուտոպիզմի մեջ, հեռանում եյին նրանից: Այդ ընդհանուր քայքայման, կասկածանքի և հիասթափութիւն պայմաններում Անդրկովկասի նարոզնիկների շարքերում ես սկսվում եր քայքայում: Անդրկովկասի շատ նարոզնիկներ, թողնելով կրախի յենթարկված նարոզնիկութիւնը, անցնում եյին դեպի լիբերալ-բուրժուազիայի դիրքերը: Վոմանք ել, հեռանալով նարոզնիկութիւնից, կազմակերպում եյին ազգային-նացիոնալիստական խմբակներ, կամ մտնում արդեն գործող այդպիսի խմբակների մեջ: Այսպիսի պայմաններում, պարզ ե, վոր նարոզնիկական նոր խմբակներ ստեղծելու գրեթե բոլոր փորձերն ել անխուսափելիորեն վերջանում եյին անհաջողութիւն: Յեվ զարմանալի չե, վոր անհաջողութիւն վերջացավ 1885 թվականին Թբիլիսիում նարոզնիկական նոր խմբակ կազմակերպելու այդ փորձն ել:

Բախը Թբիլիսիում մնաց մինչև 1885 թ. փետրվար ամիսը:

Թբիլիսիում անցկացրած ժամանակամիջոցում Բախը տեսակցում եր տեղի նարոզնիկների հետ, վորոնցից ամենաականավորը, ինչպես գրում ե ինքը Բախն իր հուշերում, Պետրովսկի Հողագործական Ակադեմիայի նախկին ուսանող իշխան Ալեքսանդր Արդուլթյանն եր (Յերկա յնաբաղուկ): Արդուլթյանը Մոսկվայի նարոզնիկական խմբակների մեջ աշխատելու համար Թբիլիսի յեր աքսորված և գտնվում եր վոստիկանութիւն հսկողութիւն տակ: Հենց այդ Արդուլթյանից ել Բախն ստացավ կեզծ անցագիր և Կովկասից ուղեւորվեց Փարիզ՝ Լեվ Տիխոմիրովի հետ տեսակցելու համար: Ալեքսանդր Արդուլթյանը Բախի հետ ունեցած կապի և նրան անցագիր տալու կապակցութիւնը 1885 թ. սեպտեմբերին բանտարկվեց և 1888 թ. չորս տարով աքսոր ուղարկվեց Արևմտյան Սիբիր: 1880-ական թ. թ. Թբիլիսիի նարոզնիկների մեծ մասը 1870-ական թվականների նարոզնիկական շարժման մասնակիցներից եյին: Բախի ասելով՝ 1870-ական թվականների նարոզնիկական շարժման մասնակիցներից եր նաև վերը հիշված (Թբիլիսիում աշխատող) փաստաբանը, վոր 1884 թ. Թբիլիսիում նարոզնիկութիւն նոր կազմակերպութիւն ստեղծելու փորձ անողներից մեկն եր:

Նարոզնիկական խմբակներ կազմակերպելու նպատակով 1884—1885 թ. թ. կատարված այս անհաջող փորձերից հետո Անդրկովկասում վոչ միայն նարոզնիկական նոր խմբակներ չկազմակերպվեցին, այլև, ինչպես յերևում ե, անգամ այդ ուղղութիւնը փորձեր ել չեղան¹: Ճիշտ ե, 1880-ական թ. թ. յերկրորդ կեսին մի քանի առանձին անհատներ դեռևս շարունակում եյին հետևել նարոզնիկական իդեաններին և տարածում եյին անգամ նարոզնիկական անլեզալ զբաղանութիւն, այնուհետև այդ նույն տարիներին մի շարք «անկարգութիւններ» տեղի ունեցան Թբիլիսիի հոգևոր սեմինարիայում (1886 թ.), բայց այդ բոլորն արդեն

¹ 1880—1890-ական թվականներին կազմակերպվեցին մի շարք քաղաքական կուսակցութիւններ, վորոնք իրենց վրա կրում եյին նարոզնիկութիւն ինչպես տակտիկայի, այնպես ել իդեոլոգիայի խիստ ազդեցութիւնը: Հնչակյան կուսակցութիւնը, որինսակ, վոր կազմակերպվեց 1887 թվին Ժնեվում, զաղափարական ու տակտիկական հարցերում շատ ընդհանուր գծեր ունեց նարոզնիկութիւն հետ: Հնչակյանների որդան «Հնչակ» պարբերականի առաջին համարներում ղետեղված են ծրագրային մի շարք հոգվածներ, վորոնք

անդոր եյին հիմք դառնալու՝ նարողնիկական նոր խմբակներ ստեղծելու համար: 1880-ական թվականներից, ինչպես վուջ Ռուսաստանում, նույնպես և Անդրկովկասում, սկսվում եյին նոր սիտուացիա, նոր իրադրություններ: Հեղափոխական նարողնիկությունը վորպես գարնանային ձյուն հալվում եր նոր սիտուացիայի ճառագայթող արևի տակ: 1880-ական թվականներից սկսած կազմակերպվեցին Ռուսաստանի բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպությունները՝ սոցիալ-դեմոկրատական մարքսիստական կազմակերպությունները, վորոնց շուրջը և համախմբվեցին բոլոր ճշմարիտ, իսկական հեղափոխականները: Հեղափոխական նարողնիկությունը թաղվեց պատմության դամբարանում: Քաղաքական պայքարի հրապարակ դուրս յեկավ բանվոր դասակարգը. սկսվեց հեղափոխական պայքարի նոր՝ արդեն հռեժկու և հաղթական փուլը:

գյուղական համայնքի դերի, կապիտալիզմի նշանակության և այլ հարցերի մասին բառացիորեն կրկնում են ուսուսական նարողնիկների ասածը (տես «Հնչակ»-ի 1887—1888 թվականների համարները, համար 1, 1939 թ., էջ 148—152): Չնայած հնչակյանների վրա յեղած նարողնիկական այդ խիստ ազդեցությանը, Հնչակյան կուսակցությունը, ինչպես նաև 1880—1890-ական թվականներին Անդրկովկասում գործող մյուս ազգայնական կուսակցությունները, այնուամենայնիվ, նարողնիկական անվանել չի կարելի:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Ս

1870—80-ական թվականների նարողնիկությունը, վորպես հետոեֆորմյան շրջանում ցարիզմի, կալվածատիրության դեմ գյուղացիության, մանր արտադրողների մղած հեղափոխական պայքարի արտահայտություն, սոցիալ-տնտեսական անհրաժեշտ հիմքեր ուներ նաև Անդրկովկասում: Նարողնիկությունը, վորի տեղ ըզվանդակությունը վոչ թե «գյուղացիական սոցիալիզմն» եր, այլ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության համար մղած նրա պայքարը, համապատասխան գործունեյության ասպարեզ ուներ Անդրկովկասում ևս: Չնայած Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքի սպեցիֆիկ կողմերին (ազգային հարցի առկայությունը, տնտեսական ու հասարակական կյանքի ավելի հետամնաց վիճակը և այլն), այնուամենայնիվ, 1870—80-ական թվականներին արդեն Անդրկովկասի տնտեսական, սոցիալ-քաղաքական կյանքը կանգնած եր հիմնականում նույն մակարդակի վրա, ինչ մակարդակի վրա վոր կանգնած եր Ռուսաստանի տնտեսական, սոցիալ-քաղաքական կյանքը:

Ինչպես Ռուսաստանում, այնպես ել Անդրկովկասում 1860—1890-ական թվականներին հեղափոխական շարժումները ղեկավարվում եյին հեղափոխական ուսուսչին ինտելիգենցիայի կողմից: Անդրկովկասի հեղափոխական ուսուսչին ինտելիգենցիան, վոր հեղափոխական-քաղաքական գործունեյության հրապարակ իջավ անցյալ դարի 60-ական թվականներից, ուներ յերկու թև: Անդրկովկասի ուսուսչին ինտելիգենցիայի մի մասն առաջ քաշելով միայն ազգային հարցը և այն չկապակցելով դեմոկրատական հեղափոխության ընդհանուր հարցերի հետ, իրեն հետու յեր պահում համառուսական հեղափոխական շարժումներից, չեր միաձուլում իր պայքարը ուսուսական հեղափոխական շարժման հետ և աշխատում եր վարել բացառապես մեկուսացած, սեպարատ, ազ-

գային ազատագրական պայքար. Անդրկովկասի հեղափոխական ռազմոչին ինտելիգենցիայի մյուս թևը, ընդհակառակը, կապելով Անդրկովկասյան ժողովուրդների ազատագրութան գործը ուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխութան հաղթանակի հետ, իր պայքարը միաձուլում էր ուսական հեղափոխական ընդհանուր շարժման հետ և ակտիվ կերպով աշխատում էր ուսական հեղափոխական շարժումների մեջ:

Անդրկովկասի հեղափոխական ռազմոչին ինտելիգենցիայի մի մասը 1870—1880-ական թվականներին սերտ կերպով կապված էր ուսական նարոդնիկների հետ, ընդգրկված էր համառուսական նարոդնիկական շարժման մեջ և ակտիվ կերպով գործում էր հեղափոխական-նարոդնիկական խմբակներում: Անդրկովկասի ռազմոչին ինտելիգենցիայի այդ մասի շնորհիվ էլ հենց նարոդնիկական իդեաները 1870-ական թվականներին սկզբներից սկսվեցին տարածվել Անդրկովկասում: Անդրկովկասի ռազմոչին հեղափոխական այդ ինտելիգենցիայի ներկայացուցիչների աշխատանքով գլխավորապես, նրանց ղեկավարութամբ հենց 1870—80-ական թվականներին Անդրկովկասում կազմակերպվեցին նարոդնիկական մի շարք խմբակներ:

Նարոդնիկական առաջին կազմակերպությունն Անդրկովկասում ստեղծվել է Վրաստանում 1875 թվին: Նարոդնիկական այդ կազմակերպությունը, վոր գոյություն ունեցավ մոտ մեկ տարի, ուներ ինտերնացիոնալ կազմ (կազմակերպության մեջ մտնում էին վրացիներ, ուսաներ, հայեր և այլն): Նրա անդամների թիվը կազմում էր մոտ 68 հոգի: Կազմակերպությունն անլեզալ գրականություն և ստացել և տարածել Անդրկովկասում: Կազմակերպությունը միաժամանակ տարել է բանավոր պրոպագանդա: Նա սերտ կապեր է ունեցել Մոսկվայում Մոֆիա Բարդինայի կողմից հիմնադրված նարոդնիկական կազմակերպության հետ և գտնվել է նրա իդեական ազդեցության տակ:

1879 թվի վերջերին Թբիլիսիում կազմակերպվել է նարոդնիկական մի նոր խմբակ: Նա պատկանել է Նարոդնայա Վոլյայի ուղղությունը: Նարոդնիկական այդ խմբակը ևս ունեցել է ինտերնացիոնալ կազմ և կապեր է հաստատել Նարոդնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեյի հետ: Խմբակը քայքայվել է, ամենայն հավանականությամբ, 1881 թ. ամառը:

1881 թվի աշնանը Նարոդնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեյի անդամ, հայտնի նարոդովուեց Աննա Կորբայի կողմից Թբիլիսիում կազմակերպվել է նարոդովուական զինվորական խմբակ, վորի անդամների թիվը յեղել և 28 հոգի: Խմբակին հաջողվել է անլեզալ գրականություն և կոչեր տարածել բնակչության ու զորամասերի մեջ: Խմբակն աշխատել է գաղտնի տպարան հիմնել և եքսպրոպրիացիոն ակտեր կատարել: Խմբակի գործունեությունը, ընդհանուր առմամբ, գնացել է Նարոդնայա Վոլյայի Գործադիր Կոմիտեյի անմիջական ղեկավարություն տակ և այն հունով, ինչ հունով վոր գնում էր Ռուսաստանում 1880-ական թվականներին գործող նարոդովույան խմբակների գործունեությունը: Խմբակը վոստիկանություն կողմից հայտարարվել է և լիկվիդացիայի յե յենթարկվել 1883 թվի սկզբներին:

1882 թվի վերջերին կամ 1883 թ. սկզբներին Թբիլիսիում հիմնվել է նարոդնիկական մի խմբակ, վորի կազմը բաղկացած է յեղել բացառապես հայ մտավորականներից: Այդ խմբակը, վոր ինքնալիկվիդացիայի յենթարկվեց 1885 թ. վերջերին, զբաղվել է նաև հայկական ազգային-ազատագրական պայքարի հարցերով: Խմբակն ունեցել է հրատարակություններ և կատարել է նարոդնիկական գաղափարների պրոպագանդա թե բանավոր և թե գրավոր ձևով:

1884—1885 թ.թ. յերկու փորձ է կատարվել Անդրկովկասում նարոդնիկական նոր խմբակներ կազմակերպելու նպատակով: Այդ յերկու փորձն էլ, սակայն, վերջացել են անհաջողությամբ:

Անդրկովկասի նարոդնիկական խմբակներն ընդհանուր առմամբ չեն ունեցել լայն գործունեություն: Նրանց աշխատանքները սահմանափակվել են նեղ շրջանակներում: Անդրկովկասի նարոդնիկական խմբակներում ընդգրկված ռազմոչին ինտելիգենցիան հեղափոխական նարոդնիկության կրախից հետո, 1880—1890-ական թվականներին անցավ մի մասը բուրժուական լիբերալիզմի, մյուս մասը՝ ազգային-ազատագրական շարժման զիրքերը:

РЕЗЮМЕ

Народничество 1870—80 г. г., представлявшее отражение революционной борьбы крестьянства и, вообще, мелких производителей пореформенного периода против царизма и помещичьего землевладения, имело необходимые социально-экономические предпосылки и условия также и в Закавказье. Народничество, реальным содержанием которого был не „крестьянский социализм“, а его борьба за буржуазно-демократическую революцию, и в Закавказье имело поле для соответствующей деятельности. Несмотря на специфические стороны социально-экономической жизни Закавказья (наличие национального вопроса, сравнительно большая отсталость экономической и общественной жизни и пр.), тем не менее в 1870—80 г. г. экономическая и социально-политическая жизнь Закавказья в основном была на том же уровне, на каком находилась экономическая и социально-политическая жизнь России.

Как в России, так и в Закавказье в 1860—1890 г. г. во главе революционного движения стояла разночинная интеллигенция. Закавказская революционная разночинная интеллигенция, появившаяся на арене революционно-политической деятельности в 60-ых годах прошлого столетия, имела два крыла.

Одна часть разночинной интеллигенции Закавказья, выдвигая только национальный вопрос и не связывая его с общими вопросами демократической революции, держалась вдали от общерусских революционных движений, не объединяла свою борьбу с русским революционным дви-

жением и старалась вести исключительно сепаратную, обособленную национально-освободительную борьбу. Другая часть, наоборот, связывая дело освобождения народов Закавказья с победой русской буржуазно-демократической революции, свою борьбу объединяла с русским, общим революционным движением и проявляла активную деятельность в нем. В результате этого одна часть закавказской революционной разночинной интеллигенции в 1870—1880 г. г. была тесно связана с русскими народниками, охвачена народническим движением и активно работала в революционно-народнических кружках. Благодаря этой части закавказской интеллигенции народнические идеи с начала 1870 г. г. стали проникать и в Закавказье. В результате деятельности представителей этой части закавказской разночинной революционной интеллигенции, главным образом при их руководстве, в 1870—80 г. г. в Закавказье был организован ряд народнических кружков.

Первая народническая организация в Закавказье была создана в Грузии в 1875 г. Эта народническая организация, просуществовавшая около одного года, имела интернациональный состав (в организацию входили грузины, русские, армяне и пр.). Число членов этой организации составляло около 68 человек. Организация получала нелегальную литературу и распространяла ее в Закавказье и одновременно вела устную пропаганду. Она имела тесную связь с основанной в Москве Софьей Бардиной народнической организацией и находилась под ее идейным влиянием.

В конце 1879 года в Тифлисе был организован новый народнический кружок, придерживающийся направления Народной воли. Этот народнический кружок также имел интернациональный состав и был связан с Исполнительным Комитетом Народной воли. Кружок распался, по всей вероятности, летом 1881 года.

Осенью 1881 года членом Исполнительного Комитета Народной воли, известным народовольцем Анной Корба, в Тифлисе был организован народовольческий военный кружок, число членов которого составляло 28 чел.. Кружку удалось распространить нелегальную литературу и воззвания среди населения и воинских частей. Кружок старался основать нелегальную типографию и совершать экспроприации. Деятельность кружка, которой непосредственно руководил Исполнительный Комитет Народной воли, протекала по тому же направлению, как и деятельность имевшихся в России в 1880-ых годах народовольческих кружков. Кружок раскрыт был полицией и ликвидирован в начале 1883 г.

В конце 1882-го или в начале 1883 года в Тифлисе был организован народнический кружок, в состав которого входили исключительно армяне-интеллигенты. Этот кружок, самоликвидировавшийся в конце 1885 года, занимался также и вопросами армянской национально-освободительной борьбы. Кружок имел издания и проводил пропаганду народнических идей как устно, так и путем печати.

В 1884—1885 г. г. были сделаны две попытки для организации в Закавказье новых народнических кружков, но обе эти попытки окончились неудачей.

Вообще, народнические кружки Закавказья не имели широкой деятельности, их работа была ограничена тесными рамками. Разночинная интеллигенция, состоящая в народнических кружках Закавказья, после краха революционного народничества, частью перешла на позиции буржуазного либерализма, частью же—на позиции национально-освободительного движения.

З А К Л Ю Ч Е Н И Е

I

З а к л ю ч е н и е

О дальнейшем направлении дознания о 28-ми лицах: дворянах—Владимире Михайлове ЯКИМОВЕ, 23 л., Павле Михайлове ЯКИМОВЕ, 22 лет, Надежде Семеновой ЯКИМОВОЙ, 29 лет, Шюо Эдимерове ДАВЫДОВЕ, 27 лет, Илье Дмитриеве МАЧАВАРИАНИ, 29 лет, Александре Теймуразове НАНИЯШВИЛИ, 26 лет, Михаиле Кайзарове КИПИАНИ, 34 лет, уволенных со службы офицерах 16-го Гренадерского Мингрельского полка: Федоре Петрове АНИСИМОВЕ, 28 лет, Александре Павлове АНТОНОВЕ, 33 лет, Иосифе Фелицианове ЛИППОМАНЕ, 26 лет, Арчиле Иванове ЦИЦИАНОВЕ, 30 лет, Николае Александрове АЛИХАНОВЕ, 28 лет, Александре Григорьеве МАКУХИНЕ, 36 лет, Владимире Людвигове ДЕРЖАНОВСКОМ, 29 лет, Леване Александрове ВАЧНАДЗЕ, 29 лет, Якове Епифанове МИТНИКЕ, 26 лет, уволенном со службы артиллерии поручике Сергее Никитине ШЕПЕЛЕВЕ, 26 лет, княжне Марии Александровой ШЕРВАШИДЗЕ, 33 лет, сыне чиновника Викторе Селиверстове МЕЛЕНЧУКЕ, 32 лет, агрономе Александре Ясевиче ЭЛИОЗОВЕ, 28 лет, сыне дьякона Степане Федорове ЧРЕЛАЕВЕ, 27 лет, крестьянах: Алексее Лаврентьеве КУЗЬМИНЕ, 26 лет, и Варваре Александровой КУЗЬМИНОЙ, 30 лет, сыне священника Апполоне Иринееве НЕМОЛОВСКОМ, 25 лет, лишенной всех прав состояния Анне Павловой КОРБА, 29 лет, отставном артиллерии капитане Сергее Петрове ДЕГАЕВЕ, дворянке Галине ЧЕРНЯВСКОЙ и сыне священника Григории ТЕР-ГРИГОРЯНЕ, обвиняемых в принадлежности к революционному кружку, образовавшемуся в гор. Тифлисе.

27-го ноября 1882 года поручик 16-го Гренадерского Мингрельского полка Федор Анисимов, бежавший из места служения в мае того же года и ныне находящийся в отставке, явившись добровольно к полицеймейстеру гор. Потти, заявил, что принадлежит к революционному сообществу и, не желая дальше оставаться его членом, отдает себя в руки правительства.

Вследствие этого Анисимов был препровожден в распоряжение сначала Кутаисского, а затем Тифлисского Жандармских Управлений, где сделал заявления, сущность коих заключается в следующем:

